AZG NEW SHABAT.QXD 19/05/2016 21:41 Page 1

20 ՄԱՅԻՍ 2016 ՈՒՐԲԱԹ 19(5419)

# Ազգ

Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

## ԹՄՄ Կենտրոնական վարչությունը 50000 դոլար է նվիրաբերում զոհված մարտիկների ընտանիքներին

Թեքեյան մշակութային միության Մ. Նահանգների եւ Կանադայի Կենտրոնական վարչությունը, Ռամկավար Ազատական կուսակցության Վերականգնումի ու միության շարժման եւ ՌԱԿ Հանրապետական վարչության հետ համախորհուրդ՝ իր վերջին նիստում որոշում է կայացրել 50 հազար դոլարի դրամական օգնություն փութացնել Ապրիլյան պատերազմի ընթացքում զոհված մեր հերոս տղաների եւ ազատամարտիկների ընտանիքներին: Հիշեցնենք, որ այս մասին արդեն, Հայաստանի ԹՄՄ կողմից ապրիլի 25-ին կազմակերպված տարեկան մրցանակաբաշխության ընթացքում հայտարարել էր ԹՄՄ Կենտրոնական վարչության եւ ՌԱԿ Վերականգնումի շարժման ղեկավարներից Երվանդ Ազատյանն իր ունեցած ելույթում:

Գումարի բաշխման ձեւի, չափի եւ այլ մանրամասնությունների մասին հետագայում կտեղեկացնենք հանրությանը:

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Ինքնօգնություն

Քառօրյա կոչվող պատերազմը սթափվելու պահ դարձավ բոլորիս համար: Նաեւ կոչ՝ օգնության հասնելու ճակատային գծին, ռմբակոծություններից տուժած բնակավայրերի բնակիչներին եւ ընդհանրապես բանակին: Մարտերի 3-րդ օրն արդեն սկսվեց օգնության փութալու մի շարժում՝ որքան հախուռն, այնքան անկազմակերպ, սակայն սրտառուչ եւ անմիջական, ինչպես հատուկ է մեր ժողովրդին: Անհատներ, կազմակերպություններ, կրթական հաստատություններ եւ հիմնարկներ ազգային մեր բանակին հասցրին ֆինանսական օգնություն, մինչ ուրիշներ նախընտրեցին սննդի ու նպարեղենի խմբաքանակներ ուղարկել առաջնագծերում մարտնչող մարտիկներին, որոնց շարքերն առաջինը համալրելու էին պատրաստ ազատամարտիկները՝ թեժ մարտերի սկսվելու հաջորդ օրն իսկ:

Քիչ ավելի ուշ, երբ արդեն սկսվել էին գուժկան լուրերը մեր ունեցած զոհերի մասին, հարազատներ, բարեկամներ եւ ընկերներ շտապեցին օգնության հասնել նրանց ընտանիքներին՝ ով ինչով կարող էր: Անմիջապես, այդ 2-րդ ալիքին միացան նաեւ սփյուռքահայերը, որոնք ջանացին անձամբ տուժածների ու զոհերի ընտանիքներին հասցնել իրենց կամ իրենց ընկերական շրջանակի նվերները, նույնպես հախուռն ու անկազմակերպ, այդ ընթացքում երբեմն ակամա թույլ տալով անհամաչափություններ, գերազանցապես ժամանակի սղության պատճառով, բարերարությունները կենտրոնացնելով մայրաքաղաքի ու նրա մերձակա շրջանների վրա, մինչ առավել հեռավոր շրջաններում գտնվողներից ոմանք զուրկ մնացին նպաստավորվելուց: Եղան ընտանիքներ, որոնք միաժամանակ մի քանի հոգուց ստացան գումարներ, այնինչ նույն բնակավայրում գտնվող մեկ ուրիշ ընտանիք՝ ոչ մի:

Հիմա արդեն ժամանակն է այս գործում եւս կարգուկանոն մտցնելու, որպեսզի թույլ չտրվի որեւէ թյուրիմացություն, առավել եւս՝ անհամաչափություն: Տարբեր կազմակերպություններ, ինչպես «Վերադարձ Հայաստանը», «Տաշիր» բարեգործական հիմնադրամը եւ այլք, բծախնդրորեն ուսումնասիրված ծրագրով են արդեն առաջնորդվում եւ զոհերի ընտանիքներին անձամբ հասցնում ոչ միայն նյութական, այլեւ հոգեբանական բնույթի օգնություն՝ նրանց վիշտն ու ցավը ինչ-որ կերպ մեղմելու նպատակով:

Սակայն ավելի խելամիտ է թվում ՀՀ Սփյուռքի նախարարի վերջերս արած առաջարկը (չմոռանանք, որ նա եղել է նաեւ սոցապ նախարար, հետեւաբար լավ է տիրապետում նման գործերին), որն է՝ յուրաքանչյուր կազմակերպության կամ գաղթօջախի հատկացնել Հայաստանի եւ Արցախի մարզերից, շրջաններից կամ համայնքներից որեւէ մեկը՝ զոհվածների համապատասխան՝ ճշտված ցուցակով, հասցեներով եւ այլ տվյալներով, եւ նվիրաբերվող գումարը համապատասխան բանկերի միջոցով ամսական վճարումների տեսքով փոխանցել թիրախային ընտանիքներին՝ մինչեւ ընդհանուր գումարի սպառվելը: Դա կլինի հարմար եւ վստահելի, եւ ամենակարեւորը՝ օգնություն ստացող ընտանիքների համար ավելի օգտակար:

Անշուշտ, սրանք այն օգնությունների մասով՝ որոնք ուղղվելու են զոհվածների ընտանիքներին: Կան շատ ավելի ծանր պարտականություններ, որոնք դիմագրավում եւ դիմագրավելու ենք ազգովին ու պետականորեն: Առաջինը՝ ռմբակոծություններից տուժած բնակավայրերի, համայնքային նշանակության օբյեկտների ու ճանապարհների վերակառուցման խնդիրն է, իսկ երկրորդը՝ պաշտպանության եւ սպառազինման հարցերը:

Վստահ ենք, որ առաջինին լրջորեն եւ ծանրակշիռ կերպով կանդրադառնա առաջիկա շաբաթավերջին Երեւանում գումարվելիք «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստը, իսկ երկրորդը՝ շատ ավելի տարողունակ ու հեռագնա՝ լինելու է մեր բոլորի ամենասրբազան պարտականությունը դեռ տեւական ժամանակ:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## «Գառները՝ ողջ, գայլը կուշտ», սակայն մեզ պետք է ծեծված գայլ




Մեծ հույսեր կապել Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների մասնակցությամբ Վիեննայում տեղի ունեցած վերջին քննարկման հետ, իհարկե, իրատեսական չէ, առաջին հերթին մեր արկածախնդիր հարեւան-հակառակորդի պատճառով: Սակայն Ռուսաստանի ԱԳ նախարարի, ԱՄՆ պետքարտուղարի, Ֆրանսիայի՝ եվրոպական հարցերով քարտուղարի բարձր ներկայացուցչական ներկայությունն այդ հանդիպմանը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներից , խոսում է այն մասին, որ ինչ-որ լուրջ մտադրություն, այնուամենայնիվ, հանդիպման նախաձեռնողներն ունեն: Որպես Վիեննական հանդիպման եզրափակում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի անունից համատեղ հայտարարության մեջ 1994-95-ի զինադադարն անշեղ իրագործման անհրաժեշտության մասնանշմանն էլ անմիջապես հետեւեց Ադրբեջանի հրահրած սահմանային նոր միջադեպը՝ հայկական կողմից զոհով, սա էլ ցույց է տալիս, որ հազիվ թե ամեն ինչ այնպես լինի, ինչպես Վիեննական հանդիպման նախաձեռնողներն են ծրագրում: Համաձայնությունը մշտադիտարկման եւ միջադեպերի հետաքննության մեխանիզմների ներդրման վերաբերյալ, իսկապես, ինչպես **Էդվարդ Նալբանդյանն** է ասում, կարող է ճանապարհ հարթել հակամարտության կարգավորման բանակցային գործընթացը սկսելու համար, սակայն նա էլ, հայ հանրությունն էլ գիտեն, թե Ադրբեջանը ինչպես է հազար այդպիսի պայմանավորվածություն խախտել, եւ ոչ մի երաշխիք, որ Բաքուն «չի խորտակի համանախագահ երկրների հույսերը, միջազգային հանրության սպասելիքները», մանավանդ երբ Վիեննայի հանդիպման արդեն հաջորդ օրն Ադրբեջանում հայտարարություններ հնչեցին, որ հետաքննությունների մեխանիզմների ներդրումը ոչ թե Ադրբեջանի, այլ համանախագահների կարծիքն է, եւ միայն:

⇨7

Պրոֆ. ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Գիտության վաստակավոր գործիչ

## Նյուրեմբերգյան դատավարության փաստաթղթերում Հիտլերի՝ Հայոց ցեղասպանության բանաձեւի եւ հարակից այլ հարցերի մասին

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄ




Մինչեւ 1965 թվականը Հայոց ցեղասպանությունը, թեմատիկ առումով, պատկանում էր այն հիմնախնդիրներին, որոնց ուսումնասիրության վրա Խորհրդային Միությունում տաբու՝ արգելք էր դրված: Նա գտնվում էր «արգելափակման փշալարերի հետեւում», ինչպես նշված է «Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո» մեր աշխատությունում, որը թարգմանվել է արաբերեն եւ հրատարակվել Կահիրեում եւ Հալեպում: Հայոց ցեղասպանությունը չէր մտնում ակադեմիական ինստիտուտների եւ համալսարանների գիտահետազոտական ծրագրերում, չէր խրախուսվում եւ չէր ստանում համապատասխան ֆինանսավորում: Ուստի այդ հույժ կարեւոր թեման գիտական եւ հասարակական բացահայտ քննարկումների ոլորտից տեղափոխվել էր հայերի ընտանեկան զրույցների եւ մասնավոր զգուշավոր խոսակցությունների բնագավառը: Դա էլ քիչ բան չէր, թեկուզ այն առումով, որ այդ յուրօրինակ ուղիով ցեղասպանության թեման ապահովում էր իր ներկայությունը եւ կարեւորությունը հայ իրականության մեջ եւ փոխանցվում հայերի մի սերունդից հաջորդ սերունդին:

Հայոց ցեղասպանության ուսումնասիրության վրա խորհրդային իշխանությունների դրած տաբուի ամենագլխավորը պատճառը թուրք-խորհրդային այսպես կոչված «բարեկամական հարաբերություններն էին», «Լենին-Քեմալ բարեկամության/եղբայրության» կեղծ հիմնադրույթը, որն ըստ էության տարօրինակ, աննական, անսկզբունքային եւ անբարոյական երեւույթ էր:

⇨8



Մեր ժամանակի հերոսը

էջ 7





«...Նրանք կարիք ունեն ճիշտ հասկացվելու»

էջ Ա,Դ



Մահմեդական աշխարհը իսլամիստներից առաջ եւ այսօր

էջ 10,11

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Կասկածելի բարեգործութիւն

Դիմատետրին (Ֆէյսբուք) մէջ յայտարարութիւն կար Արցախի մեր զինուորներուն օգնելու, եւ յիշուած էին ամենակարեւոր պէտքերը անոնց՝ ծխախոտ, անձրեւանոցներ, ձեռնոցներ, նոյնիսկ ներքնազգեստ... Յիշուած էր նուէրներու հաւաքման ժամկէտն ու բեռնատար մեքենայով հաւաքուած իրերը դէպի Արցախ ճամբայ ելլելու թուականը: Հասցէ չկար, միայն կը յիշուէր, որ վայրը Պանկլատէշ է եւ տրուած էր պատասխանատուին անունն ու հեռախօսի համարը:

«Ինչ մարդկային եւ հայրենասիրական վերաբերմունք», եղաւ անմիջական տպաւորութիւնս ու կը պատրաստուէի մասնակցելու նուիրահաւաքին. սակայն ցաւ մը սողոսկեցաւ մէջս. ուրեմն այս աստիճան աղքա՞տ են մեր բանակները, որ զինուորները ժողովուրդին օգնութեան կարիքը ունին իրենց տարրական պէտքերուն համար: Ամօթ զգացի. մեր զինուորներուն գովքը հիւսող ինչ խօսքեր ու գրութիւններ հեղեղուեցան, զինուորներ, որոնք սիկառէթ չունին, ձեռնոց չունին, ներքնազգեստ չունին եւ անձրեւին տակ խխում կը կտրին, քանի որ անձրեւանոց չունին...

Դիմատետրի կոչին տակ կային «քոմենթներ», անդրադարձներ, ըսի՝ կարդամ... ու ամէն ինչ տակնուվրայ եղաւ մէջս. ձեռնարկը քաջալերողներուն կողքին, ծանր ամբաստանութիւններ կային կազմակերպիչներուն հասցէին, թէ գողեր են, թէ հաւաքուածները պիտի սեփականացնեն ու վաճառեն, եւայլն...

Կազմակերպիչները գրած էին, որ փափաքողները կրնան իրենց ընկերանալ ու իրենց աչքերով տեսնել, թէ ինչպէս տեղ կը հասնին նուէրները, անոնք նոյնիսկ կը խոստանային նկարներով եւ տեսերիզով փաստել նուէրներուն բաշխումը...

Միւս կողմէ ըսողներ կային, թէ ասկէ առաջ ալ այսպիսի բան եղած է ու ոչինչ հասած է զինուորներուն, անոնց իսկ վկայութեամբ:

Այսպիսի կոչեր եղան նաեւ հեռաւոր գիւղերու մէջ ապրող անտէր ընտանիքներու, կամ ծերունիներու օգնելու Ահագին բան հաւաքուեցաւ, քանիերորդ բեռնակառքը լեցուեցաւ, սակայն այդ հաւաքուածները տեղ հասան, թէ՞ ոչ, մարդիկ կը կասկածին: Ինչո՞ւ այս անվստահութիւնը:

Այս ալ երեւի «պիզնեսի» նոր ձեւ է, ժողովուրդին զգացումները շահագործելով, քանի որ ամէնաաղքատ հայն իսկ կը սիրէ բարեգործութիւն ընել:

«Փրոֆեսիոնալ» մուրացկաններու մասին գրած ենք, հիմա նորաձեւութիւն մտած է անոնց մէջ ալ՝ ձեռք բանալու կողքին սկսած են երախաներու նկարներով զարդարուած խաւաքարտներ բռնել, իբր թէ հիւանդ ու խնամքի կարօտ երեխաներու համար է:

Հիւսիսային պողոտային վրայ ալ երիտասարդ զոյգ մը, որ բնաւ մուրացկանի չեն նմանիր, ձեռքերնին քարթոնէ տուփ մը՝ վրան ճեղքով, ճամբադ կը կտրեն ու կ'ըսեն, թէ հիւանդ երախայի համար օգնութիւն կը հաւաքեն: Ո՞վ է հիւանդը, իրենք որմէ՞ լիազօրուած են, որեւէ փաստ ունի՞ն... Ոչինչ: Տարիէ մը ի վեր կ'երեւին միեւնոյն վայրը, հեռուէն, մարդու հագուածքէն կ'որոշեն որու պիտի դիմեն, եւ հարցնող չ'ըլլար իրենց, թէ սա հիւանդ երախան դեռ չառողջացա՞ւ...

Կը ցաւիմ կասկածը մէջս մտած ըլլալուն համար, սակայն ակամայ թացը չորին հետ կ'այրի: Աղքատութիւնը ինչ դռներ կը բանայ: Հապա՞ ընչաքաղցութիւնը...

Ներողութիւն հայցելով անկեղծ բարեգործներէն, կը դատապարտեմ մուրացկանութիւնն ու բարեգործութիւնը պիզնեսի վերածողները:

Հայ ազգի հիմքը բարոյականութիւնն է. մի քանդէք զայն, ապա թէ ոչ ամբողջ շէնքը կրնայ փլիլ:

# Նորաստեղծ, համառուսաստանյան «Հայկական վերածնունդ» կազմակերպության փաստի առնչությամբ

*Վերջին շրջանում հայկական մամուլը հաճախակի անդրադառնում է Արթուր Բաղդասարյանի կողմից Ռուսաստանում ստեղծված հասարակական կազմակերպությանն ու այդ առնչությամբ Ռուսաստանի հայերի միության հնարավոր դիրքորոշմանը: Այդ առնչությամբ «Ազգի» զրուցակիցն է Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի փոխնախագահ Վլադիմիր Աղայանը:*



**- Պրն Աղայան, Արթուր Բաղդասարյանը վերջերս Ռուսաստանում ստեղծեց «Հայկական վերածնունդ» համառուսաստանյան հասարակական կազմակերպություն: Մոսկվայի կենտրոնում էլ հանդիսավոր պայմաններում բացվեց այդ կազմակերպության գրասենյակը: Ինչպե՞ս է այս հանգամանքը դիտարկվում Ռուսաստանի հայերի միություն համառուսաստանյան հասարակական կազմակերպության նախագահ Արա Աբրահամյանի եւ կառույցի մյուս ղեկավարների կողմից:**

- Ասեմ, որ ինչպես Արա Աբրահամյանը, այնպես էլ մենք բոլորս այդ իրողությունը նորմալ ենք ընդունել: Ռուսաստանը անծայրածիր տարածք ունեցող երկիր է, իսկ այդ երկրում հայկական համայնքը աշխարհում խոշորագույնն է: Ուստի խնդիրները Ռուսաստանում բազմաթիվ ու բազմապիսի են , որոնցով կարող են զբաղվել ոչ թե երկու, այլ տասնյակ կազմակերպություններ: Այնպես որ ստեղծված նոր կազմակերպության համար եւս կա գործունեության լայն ասպարեզ: Ուրախ կլինենք, որ այդ նոր կազմակերպությունը լծվի այդ խնդիրների լուծման գործընթացին: Խնդիրներից են հատկապես Ռուսաստանի հայության աշխատանքային, իրավական, կրթամշակութային շահերի պաշտպանության, նաեւ հայապահպանության հարցերը: Դեռեւս շատ անելիքներ կան ռուս-հայկական հարաբերությունների էլ ավելի խորացման, Հայաստանում ռազմավարական գործընկերոջ՝ Ռուսաստանի, ռուս ժողովրդի վարկի հետագա բարձրացման ոլորտում: Ցանկության դեպքում այդ նոր կազմակերպությունը կարող է իրեն գտնել այդ հարցերի լուծման գործընթացներում:

**- Պրն Աղայան, շահարկվում է մի հարց, թե այդ կազմակերպության գործունեությունը կարող է ստվերել Ռուսաստանի հայերի միության հեղինակությունը:**

- Բոլորովին համամիտ չեմ, դա անհնար է: Լավ ճանաչելով մեր կազմակերպության կարողությունները՝ այդ ուղղությամբ ընդհանրապես չենք էլ մտածում: Ռուսաստանի հայերի միությունը գործում է արդեն 15 տարի, որոնց ընթացքում Ռուսաստանում ստեղծվել են հայկական համայնքով զբաղվելու առաքելությամբ բազմաթիվ հասարակական կազմակերպություններ: Դրանց մի մասը ընդհանրապես չի էլ գործել: Մյուսների դեպքում էլ գործունեությունը, եթե այդպիսին տեղի ունի, նկատելի չի եղել: Իհարկե, անկեղծորեն մենք չենք ցանկանում, որ «Հայկական վերածնունդ» նոր կազմակերպությունն ունենա նման ճակատագիր, ուստի եւ Արա Աբրահամյանը, եւ մենք բոլորս, այդ կազմակերպությունում աշխատողներս, բարի երթ ենք ցանկանում նորաստեղծ կառույցին՝ իր առջեւ դրված խնդիրների բարեհաջող իրագործման հարցում:

**- Այս առնչությամբ եւս մեկ հարց է շրջանառվում, որ առնչվում է Արա Աբրահամյան-Արթուր Բաղդասարյան քաղաքական համատեղ հնարավոր գործունեությանը Հայաստանում: Ինչպես կմեկնաբանեք այս պնդումները:**

- Միանշանակորեն կարող եմ ասել, որ Արա Աբրահամյանը եւ Արթուր Բաղդասարյանը այսօր Հայաստանի քաղաքական դաշտում միասնական գործելու նպատակ չեն հետապնդում: Ասեմ ավելին. եթե հիշողությունս չի դավաճանում, ապա մեկուկես ամիս առաջ Արթուր Բաղդասարյանը Հ3 հեռուստաալիքով հարցազրույցի ժամանակ արձագանքեց նաեւ այդ հարցին, մասնավորապես նշելով, որ «Հայկական վերածնունդ» հասարակական-քաղաքական կազմակերպությունը եւ Արա Աբրահամյանը ոչ մի նպատակ չունեն քաղաքական դաշտում միասին գործելու: Բաղդասարյանը նաեւ ընդգծեց, որ Արա Աբրահամյանը Հայաստանում կստեղծի կուսակցություն, թե ոչ, ինչ ծրագրեր ունի, կգնա ընտրությունների, թե՞ ոչ՝ իր գործն է:

Քաղաքական դաշտում համատեղ քաղաքական գործունեություն չծավալելու մասին բազմիցս հայտարարել է նաեւ ՌՀՄ նախագահ Արա Աբրահամյանը: Ես այս ամենից հետո ավելացնելու ոչինչ չունեմ:

**- Այդ դեպքում ինչպիսին են Աբրահամյան-Բաղդասարյան քավոր-սանիկային հարաբերությունները, եթե չեն արտահայտվում քաղաքականության մեջ:**

- Անկեղծ ասած՝ այդ հարցն այսօր շատ է շահարկվում: Եվ ես ինձ թույլ կտամ ասել, որ հարցադրումը կոռեկտ չէ, քանի որ քավոր-սանիկ հարաբերությունները ընտանեկան հարթության վրա են ձեւավորվում: Եվ այդ հարաբերությունները, կարծում եմ, ոչ մի կապ չունեն հասարակական կամ քաղաքական հարաբերությունների հետ: Ուստի առաջարկում եմ այդ հարցով հետաքրքրվողներին զերծ մնալ քավոր-սանիկ հարաբերությունները քաղաքականացնելուց:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Վիեննան ապացուցեց բանակցությունների «կոման»

Բոլոր կարգի հանդիպումներն ու երկխոսելու փորձերն, իհարկե, շատ լավ ու տեղին են, սակայն իրականությունն ու դրան արձագանքելու առողջ տրամաբանությունը հուշում են, որ անկախ վիեննական հանդիպումներից, պատրաստ պետք է լինել շարունակվող ռազմական գործողություններին: Ավելին, անգամ նախորդած հանդիպումների ժամանակ եւ դրանցից հետո տեղի ունեցած դիվերսիոն քայլերն ու զոհերը շփման գծում վկայում են, որ վերջին երկուերեք տարվա առումով իրավիճակը փոխվել է, եւ բանակցությունների սեղանին դրված ո՛չ փաստաթղթերը, ո՛չ էլ դրանցում ներառված տարբեր առաջարկները էական ազդեցություն չունեն այն ամենի վրա, ինչը կոչվում եւ ընկալվում է որպես ղարաբաղյան հակամարտություն:

Իրականն ու նշանակություն ունեցողը իրադրության գնահատականներն ու դրանից բխող քայլերն են, որոնք բոլոր կողմերի պարագայում բացարձակապես տարբեր ուղղվածություն ունեն: Խոսքը ինչպես Ադրբեջանի համար ռազմական ինչ-ինչ գործողություններով սեփական երկրում իշխանության հեղինակության պահպանման խնդրի մասին է, այնպես էլ Հայաստանում ու Արցախում ստատուս քվոյի փոփոխության ապրիլյան սցենարի անընդունելիության:

«Ազգի» նախորդ համարում տեղ էր գտել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների՝ այդ շրջանում վերջին հայտարարության մեկնաբանությունը, շեշտադրմամբ, որ Հայաստանի ու Ադրբեջանի նախագահներին գրեթե պարտադրում են հանդիպել: Ու թեեւ նախորդ շաբաթավերջի համար անգամ պաշտոնապես չէր հայտարարվում երկուշաբթի նախատեսված հանդիպման մասին, այն տեղի ունեցավ, ընդ որում՝ հետաքրքրական հանգամանքներում:

Ամենից առաջ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների արտգործնախարարների մակարդակով մայիսի 16-ի գրեթե կեսգիշերին տարածված հաղորդագրությամբ կարծես ամրագրվեց այն վիճակը, որ ստացվել է ապրիլյան «չորսօրյա պատերազմի» արդյունքում, ասել է, թե ըստ նախագահ Սերժ Սարգսյանի՝ շփման գծի մոտ 800 հեկտար տարածքի կորստով: Կարելի է տարատեսակ մեկնաբանել ու հայտարարել, թե հաղթանակած ու պարտված կողմերի իրողություն կա, սակայն փաստ է, որ, ըստ նույն հաղորդագրության, համանախագահները ընդգծել են 1994 եւ 1995 հրադադարի համաձայնագրերի պահպանումը, որոնցից եւ ոչ մեկում շփման գծի որտեղով կամ ինչպես անցնելու մասին ոչ մի տող չկա: Այսինքն՝ նույն այդ համաձայնագրերը կարող են ու ամենայն հավանականությամբ կգործեն ադրբեջանական կողմի համար բարենպաստ փոփոխված շփման գծի պայմաններում:

Մեկնաբանությունները, թե հանդիպմանը ընդունվել են հայկական կողմի պահանջները, մեղմ ասած, իրականությանը չեն համապատասխանում, եթե իհարկե խոսքն այն հանդիպման մասին է, որին անդրադարձել են ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարության մեջ Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ ԱՄՆ արտգործնախարարները: Իսկ հիշատակված հայտարարությամբ որեւէ կերպ չի նշվում, թե ԵԱՀԿ հետաքննական մեխանիզմի առկայության ու գործունեության դեպքում միայն հայկական կողմը կգնա հունիսին նախատեսվող Սարգսյան-Ալիեւ նոր հանդիպմանը, որին եւս երեւի երկու նախագահները կգնան, սակայն այդ մասին կհայտնեն միայն ինքնաթիռում հայտնվելուց ժամեր առաջ:

Ոչ մի կերպ հնարավոր չէ տրամաբանորեն ենթադրել, թե ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակն ընդլայնելու պահանջի չիրագործումը, որ նաեւ անհնար կդարձնի հետաքննական քայլերի կատարումը, կարող է ի չիք դարձնել հունիսին նախատեսվող հանդիպումը, հատկապես մայիսյան այս հանդիպումը, ինչպես եւ սպասելի է հունիսի համար, ոչ թե կարգավորման բանակցությունների շուրջն էր, այլ ուղղակի փաստի ու այն հանգամանքի, որ ռազմական գործողությունները դադարեցնելու ժամանակն է:

⇨12

AZG NEW SHABAT.QXD 19/05/2016 21:41 Page 3



# «Հրազդան-ցեմենտը» կգործի, իսկ Միխայիլ Բաղդասարո՞վը...

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Հրազդան-ցեմենտ» ընկերությունն անցյալ տարվա 4-րդ եռամսյակից վերագործարկվել է, թողարկելով շուրջ 75 հազ տոննա կամ 2,7 մլրդ դրամի ցեմենտ: Ընկերությունում ներկա պահի դրությամբ աշխատում է 470 մարդ: Երբեմնի արդյունաբերական քաղաք Հրազդանում նման ձեռնարկության վերագործարկման նշանակության մասին խոսելը երեւի թե ավելորդ է: Ավելացնենք նաեւ մրցակցային դաշտ ապահովելու առումով Հայաստանում երկրորդ ցեմենտի գործարանի աշխատելու կարեւորությունը: Գագիկ Ծառուկյանին պատկանող «Արարատցեմենտը» կունենա մրցակից, ինչը, բնականաբար, դրականորեն կազդի արտադրվող ցեմենտի որակի եւ գների վրա: Եվ, ի վերջո, «Հրազդան-ցեմենտը» արդյունաբերական ձեռնարկություն է, Հայաստանի արդյունաբերության երբեմնի հսկաներից մեկը եւ նրա աշխատանքը (մի կողմ թողնելով էկոլոգիական խնդիրները) միմիայն դրական նշանակություն կունենա մեր արդյունաբերության համար այնպես, ինչպես որեւէ այլ արդյունաբերական ձեռնարկության վերագործարկման դեպքում: Իսկ ի՞նչ էր եղել այդ ձեռնարկության հետ եւ ինչո՞ւ էր այն հայտնվել պարտքերի եւ տույժ-տուգանքների տակ:

2008-2009-ին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին շինարարության անկումը, բնականաբար, բացասական ազդեցություն ունեցավ նաեւ «Հրազդան-ցեմենտի» վրա: Սակայն, ասել, թե ձեռնարկությունը ֆինանսական պարտավորություններ կուտակեց միայն այդ պատճառով՝ ճիշտ չէ: Այն ժամանակ ընկերության սեփականատերն էր ոչ անհայտ Միխայիլ Բաղդասարովը: Այս մարդուն բնորոշ է գրեթե նվեր ստացած ձեռնարկությունները հասցնել սնանկացման եզրին, ապա հավաքելով նրանց գործունեությունից ստացված ողջ հասույթը՝ հեռանալ: Ընդ որում, Միխայիլ Բաղդասարովը սովորաբար մենաշնորհային բիզնես է ծավալում՝ չունենալով կամ գրեթե չունենալով մրցակցություն: Մի ժամանակ, նա դիզվառելիքի միակ ներկրողն էր, ապա մյուս ներկրողների հայտնվելուց հետո դուրս եկավ այս ոլորտից: Հետո նա ազգային ավիափոխադրող «Արմավիայի» սեփականատերն էր եւ վերջինիս նույնպես «բարեհաջող» սնանկացման հասցրեց՝ պարտքեր թողնելով բոլորին՝ պետական բյուջեին, օդանավակայանին, ավիացիոն զանազան ծառայություններին, ավիաընկերության օդաչուներին, ուղեկցորդուհիներին եւ մյուս աշխատակիցներին: «Հրազդան-ցեմենտն» այս շարքում հերթականն էր:

Ինչպես ընդունված է մեղմորեն ասել՝ «անարդյունավետ կառավարման պատճառով», «Հրազդան-ցեմենտը» 2016-ի փետրվարի 1-ի դրությամբ 933 մլն դրամի պարտք ուներ պետական բյուջեին: «ՎՏԲ-Հայաստան Բանկը», որտեղ գրավադրված են «Հրազդան-ցեմենտի» գույքն ու հաշիվները, տրամադրել էր լրացուցիչ վարկ՝ 179 մլն դրամ աշխատակիցների աշխատավարձը մարելու եւ 122 մլն դրամ՝ հոսանքի դիմաց վճարումներ կատարելու նպատակով: Հարկերի ուշացման պատճառով կուտակված տույժերից ազատելու դեպքում, բանկը պատրաստվում է լրացուցիչ ֆինանսավորում տրամադրել՝ ի հավելումն արդեն տրամադրած 4,6 մլն դոլարի վարկի: Վերջինիս շնորհիվ ընկերությունն իրականացնում է արտադրության ընդլայնման աշխատանքներ, նախատեսելով ցեմենտի արտադրության 2016-ի տարեկան ծավալը հասցնել մինչեւ 200 հազար տոննայի, որի արդյունքում պետական բյուջե կվճարվի ավելի քան 700 մլն դրամի հարկեր, կպահպանվեն աշխատատեղերը, հնարավորություններ կառաջանան արտադրության զարգացման համար:

Թեեւ դժվարությամբ, բայց խորհրդարանն, այնուամենայնիվ, համաձայնություն տվեց «Հրազդան-ցեմենտին» տույժերից ազատելու: Ինչո՞ւ դժվարությամբ, քանի որ աշխատատեղեր ստեղծելու, տնտեսություն զարգացնելու կոչերով հաճախ հանդես եկող պատգամավորները մոռանում են այդ ամենի մասին հենց այն պահին, երբ դա անհրաժեշտ է գործնականում ապացուցել: Այդուհանդերձ, «Հրազդան-ցեմենտին» գործելու հնարավորություն տրվեց, բայց նրան այդ կացության մեջ գցած «գործարարը» հերթական անգամ խուսափեց պատասխանատվությունից: Մի՞թե նա այլեւս չուներ գույք կամ այլ ակտիվներ, որոնք պետք է կալանքի տակ վերցվեին եւ դրանց վաճառքի միջոցով մարվեին այն պարտքերը, որոնք առաջացել էին Բաղդասարովի կողմից գումարային ամբողջ հասույթները գրպանը դնելու սովորության համաձայն՝ թե՛ «Հրազդան-ցեմենտի», թե՛ «Արմավիայի» դեպքում:

# Գնանկումը դեռ գնաճ չի դարձել, ԿԲ-ն իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը

Կենտրոնական Բանկի խորհուրդը մայիսի 17-ի նիստում որոշել է կրկին իջեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0,5 տոկոսային կետով՝ սահմանելով այն 7,75 տոկոս: ԿԲ հաղորդագրության մեջ բերվում են գնաճի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն: Համաձայն դրա, 2016 թ. ապրիլին արձանագրվել է 0,3 տոկոս գնանկում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0,4 տոկոսի դիմաց, որի պարագայում 12-ամսյա գնաճն ամսվա վերջին դարձյալ բացասական է, այսինքն գնանկումային՝ 1,9 տոկոսով:

Հայաստանում գնանկումային միջավայրի պայմաններում, ԿԲ-ն այս տարվա մեջ արդեն երրորդ անգամ գնաց վերաֆինանսավորման տոկոսադրույքի իջեցման, ընդ որում, այս անգամ միանգամից 0,5 տոկոսային կետով: Հիշեցնենք, որ անցյալ տարվա օգոստոսին վերաֆինանսավորման տոկսադրույքը 10,25 տոկոս էր, որից հետո այն միայն իջեցվել է: Գնանկումային միջավայրը եւ տնտեսական աշխուժության խթանման անհրաժեշտությունը պայմանավորել էր ԿԲ-ի կողմից դրամավարկային պայմանների թուլացումը:

Ըստ Կենտրոնական բանկի հիմնավորումների, համաշխարհային տնտեսությունը շարունակում է աճել դանդաղ տեմպերով, սակայն ներկայումս միջազգային ապրանքային շուկաներում գնանկումային միտումները փոխարինվել են հարաբերական կայունությամբ: Այդուհանդերձ, ԿԲ խորհրդի գնահատմամբ, առաջիկա ամիսներին դեռեւս կշարունակվի արտաքին աշխարհի գնանկումային ազդեցության փոխանցումը մեր ներքին գներին՝ չեզոքանալով ընթացիկ տարվա երկրորդ կեսին: Այսինքն տարվա առաջին կեսին գնանկումային միջավայրը Հայաստանում կպահպանվի, ինչը պայմանավորված է արտերկրից եկող ազդեցություններով:

Միաժամանակ, գլխավոր դրամատունն ընդգծում է այս տարվա առաջին եռամսյակում տնտեսական ակտիվության «զգալի ավելացումը», որին հիմնականում նպաստել է արդյունաբերությունում եւ ծառայությունների ոլորտում «սպասվածից ավելի» աճը: Հիշեցնենք, որ հունվար-մարտին տնտեսական ակտիվության աճը կազմել էր 5,5 տոկոս:

Հակառակ այն բանի, որ նախորդ անգամ ԿԲ-ի դիտարկմամբ պահանջարկը Հայաստանի ներքին շուկայում ցածր էր, այս անգամ նշվում է, որ դրական միտումներ են արձանագրվում նաեւ ներքին պահանջարկում՝ արտացոլելով նախորդ ամիսների ընթացքում Կենտրոնական բանկի եւ կառավարության կողմից իրականացրած խթանող քաղաքականության ազդեցությունը: Ընդ որում, շեշտվում է հատկապես Հայաստանի տնտեսության արտահանելի հատվածի աճի բարձր տեմպերը: Դարձյալ հշեցնենք, որ հունվար-ապրիլին Հայաստանից արտահանումն աճել էր 26,3 տոկոս, որի մեջ նկատելի դեր էր ունեցել պատրաստի արտադրանքի արտահանման ավելացումը: Այս ամենը նկատի ունենալով, ԿԲ-ն 2016 թ. տնտեսական աճի վերաբերյալ սպասումները ճշգրտել է աճի ուղղությամբ: Տարեկան տնտեսական աճի կանխատեսումը հավանաբար Կենտրոնական բանկը կհրապարակի առաջիկայում՝ գնաճի հաշվետվությունում:

ԿԲ խորհուրդը հայտարարել է նաեւ, որ շարունակելու է դրամավարկային պայմանների ավելի մեծ քայլով թուլացումը, նշելով, որ գնաճային սպասումները նվազել են, իսկ իր վարած քաղաքականության ազդեցության գործոնին ավելացել է նաեւ բնական գազի սակագնի սպասվող իջեցման գործոնը: Հայտնի է, որ Ռուսաստանի կողմից Հայաստանին մատակարարվող գազի գնի 165 դոլարից 150 դոլար իջեցումից հետո «Գազպրոմ Արմենիա» ընկերությունը դիմել է հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ սպառողների համար 9,3 դրամով գազի գնի իջեցման հայտով:

Այդուհանդերձ, Կենտրոնական բանկի գնահատմամբ, դրամավարկային պայմանների ավելի թուլացման արդյունքում գնաճային միջավայրը 2016 թ. երկրորդ կեսից աստիճանաբար կընդլայնվի եւ կանխատեսվող հորիզոնում 12-ամսյա գնաճը կվերադառնա 4 տոկոս + - 1,5 տոկոս միջակայքով նպատակային ցուցանիշին:

Այսպիսով, որպես ամփոփում՝ նկատի ունենալով, որ գնաճի փոխարեն արձանագրվում է գնանկում, ԿԲ-ն իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը, դրանով նպաստելով տնտեսական աճի տեմպի բարձրացմանը: Հակառակ քայլին՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացմանը, նա դիմում է գնաճի ցուցանիշի բարձր լինելու պարագայում եւ այն զսպելու նպատակով:

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## ՀԱՄԱՌՈՏ

### 797 կրճատվող ծառայողական մեքենաներ եւ մյուսների շահագործման փոփոխություն

**Այս մասին կառավարության երեկվա նիստում հայտարարեց կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանը, ներկայացնելով նախորդ նիստին վարչապետի տված հանձնարարականի վերաբերյալ զեկույցը:**

**«Ավտոմեքենաների կրճատման հարցով մենք խնդրին մոտեցել ենք փուլային եղանակով, եւ արդյունքը հետեւյալն է. առաջին փուլում կրճատվելու է 797 մեքենա: Մենք աշխատել ենք բոլոր նախարարությունների հետ, բացի պաշտպանության եւ արտաքին գործերի նախարարությունների, բոլոր առընթեր մարմինների հետ, բացառությամբ ոստիկանության, ազգային անվտանգության եւ քննչական ծառայությունների, ինչպես նաեւ փրկարար ծառայության: Բյուջեից ուղղակի ֆինանսավորվող մեքենաների քանակը կրճատվում է 107-ով, իսկ մարմիններին ենթակա ՊՈԱԿ-ներում, ՓԲԸ-ներում եւ հիմնադրամներում կրճատվելու է 690 ավտոմեքենա»:**

**Ըստ Դավիթ Հարությունյանի, կառավարության հաջորդ նիստին ֆինանսների նախարարը կներկայացնի նաեւ կրճատված ավտոմեքենաների պահպանման ծախսերի նվազեցումը: Նախատեսվում է նաեւ արգելել սպասարկող (այսինքն՝ հերթապահ) մեքենաների ամրագրումը որեւէ կոնկրետ պաշտոնասար անձի, բոլոր մարմինների պաշտոնական կայքերում զետեղել տեղեկատվություն մեքենա առ մեքենա, թե ում է այն սպասարկում, մակնիշը, արտադրության թվականը, շարժիչի հզորությունը, պետհամարանիշը, արգելել ծառայողական նպատակներով օգտագործելու համար ՊՈԱԿ-ին, ՓԲԸ-ին, հիմնադրամներին կամ պետական հիմնարկին պատկանող մարդատար ավտոմեքենաների տրամադրումը հանրապետական գործադիր մարմիններին: Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի հավաստիացմամբ, ավտոմեքենաների կրճատման հետ կապված աշխատանքները շարունակվելու են:**

### Հուշաթերթ եւ հավասար պայմաններ բոլոր ներմուծողների համար

**Վարչապետ Հովիկ Աբրահամյանը կառավարության երեկվա նիստում հանձնարարական տվեց էկոնոմիկայի նախարարին կազմել հուշաթերթ, որպեսզի բիզնեսով, մասնավորապես ներմուծմամբ զբաղվողների համար հասանելի եւ պարզ լինի, թե ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ՝ մյուս մարմիններում արհեստական խոչընդոտներ չստեղծելու համար եւ որպեսզի այդ հուշաթերթը տեղադրվի նախարարության կայքում: Պետական եկամուտների կոմիտեին էլ հանձնարարվեց բոլոր ներկրողների համար հարկային եւ մաքսային հավասար պայմաններ ապահովել,որը լինելու է վարչապետի վերահսկողական ծառայության հսկողության ներքո՝ ստուգելու են շաբաթը կամ ամիսը մեկ անգամ:**

### 14,6 մլն դոլար Գյումրու փողոցների վերականգնման համար

**Երեկ կառավարության հավանության արժանացած՝ «Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ ստորագրված «Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր» վարկային համաձայնագրով նախատեսվում է Հայաստանին տրամադրել 14.6 մլն եվրո գումարի չափով վարկ՝ Գյումրի քաղաքի ճանապարհների հիմնանորոգման եւ քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքների, այդ թվում՝ ասֆալտի եւ մայթերի նորոգման, ինչպես նաեւ ջրահեռացման (դրենաժային) ենթակառուցվածքների արդիականացման, հետիոտնային նոր տարածքների կառուցման, քաղաքային լուսավորության ենթակառուցվածքների վերակառուցման եւ Գյումրի քաղաքի համար ավտոկայանատեղիների վերաբերյալ ռազմավարության մշակման համար: Վարկը տրամադրվում է 15 տարով, որից արտոնյալ ժամկետը՝ 3 տարի, տոկոսադրույքը լողացող՝ 6-ամսյա EURIBOR + 1%:**

Ա. Մ.

AZG NEW SHABAT.QXD 19/05/2016 21:41 Page 4



# Մեր ժամանակի հերոսը

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Հոդվածիս վերնագիրը փոխ է առնված ռուս բանաստեղծ եւ արձակագիր Մ.Յ. Լերմոնտովի ռեալիստական վեպից, որի իրադարձությունները Կովկասում են տեղի ունենում: Բայց մեր ժամանակի հերոս Կարո Փայլանը ընդհանուր ոչինչ չունի Լերմոնտովի գլխավոր հերոսի՝ Պեչորինի հետ, ով ինքն իրեն չվստահող բայրոնյան մի կերպար է: Ի դեպ, ռուս շատ գրողներ են հրապուրվել Կովկասով, բայց ոչ անպայմանորեն այնտեղ բնակվող ժողովուրդներով: Լերմոնտովից բացի կարելի է հիշատակել Լ.Ն. Տոլստոյի «Հաջի Մուրադ» վիպակը, որը Չեչնիայի մասին է եւ Ա.Ս. Պուշկինի «Ճանապարհորդություն դեպի Էրզրում» հուշագիրքը, որտեղ նա ոչ նպաստավոր բառերով է բնութագրում հայերին, առաջ անցնելով ծովակալ Մարկ Բրիստոլից, Ստամբուլում տեղակայված Մ. Նահանգների գերագույն հանձնակատարից, ով իր զեկույցներում փորձում էր հերքել Հենրի Մորգենթաուի վավերագրությունները Հայոց ցեղասպանության մասին:

Այժմ, անսպասելիորեն, մի հայ հերոս է հայտնվել Թուրքիայում, ով իր մի շարք դրսեւորումներով լրիվ հակապատկերն է տիպիկ ստամբուլահայի, որ դաժան փորձառությունից ելնելով իրեն չափազանց զգուշավոր եւ պահպանողական է պահում՝ ինչպես իր արտահայտություններում, այնպես էլ իր գործելաոճում: Տիպիկ ստամբուլահայի համար, օրինակ, ավանդական հայկական կուսակցությունները վտանգավոր կառույցներ են, որոնցից անհրաժեշտ է հեռու մնալ: Ցեղասպանության դառը փորձառությունն իրենց ուսերին, նրանց անհատականությունները ձեւավորվել են քեմալիստական իշխանության լուծի ներքո, երբ պատմության դասագրքերը թույն էին թափում հայերի վրա: Նրանց բնավորության այդ գիծը անխաթար մնաց նաեւ «Ունեցվածքի հարկի» գործադրման, սեպտեմբերի 6-ի կոտորածների եւ ոստիկանական մշտական հսկողությունների ժամանակաշրջաններում: Շարունակել գոյատեւելու համար նրանք ստիպված էին շրջանցել իրենց էթնիկական ինքնությունը, անհատականությունը:

Կարո Փայլանը հնազանդ հայի այդ ապրելաոճը քարուքանդ արեց, ինչպես իրենից առաջ, ի գին իր կյանքի, արել էր Հրանդ Դինքը: Որպես HDP կուսակցության անդամ Թուրքիայի խորհրդարան մուտք գործելուց ի վեր Փայլանն անողոք պայքար է մղում հանուն ընդհանրապես մարդու իրավունքների եւ մասնավորապես հայկական հարցերի: Արդար լինելու համար պետք է նշել, որ տարբեր կուսակցություններից Թուրքիայի խորհրդարանում հայտնված բոլոր երեք հայ պատգամավորներն էլ միանշանակ անզիջում դիրքորոշում ունեն հայկական հարցերի նկատմամբ:

Փայլանի մղած «մարտերից» մեկը վերաբերում էր Դիարբեքիրի Սուր քաղաքի հայկական Սբ. Կիրակոս եկեղեցու ապօրինի զավթմանը: Նա վարչապետին հարց էր տվել, թե ո՞րն էր պատճառը մասնավոր սեփականություն համարվող ընդհանուր առմամբ 6,300 անշարժ գույքերի «անմիջական սեփականազրկման»: Արդյոք դա «հատկապես հայկական, ասորական եւ քաղկեդոնական համայնքների ունեցվածքներին տիրանալու փորձ չէ՞ր»:

Պատճառները, անշուշտ, բազմաթիվ էին: Վերանորոգումից հետո Սբ. Կիրակոսը Թուրքիայի թաքնված հայերի համար դարձել էր ոգեշնչման աղբյուրը, գրավիչ խորհրդանիշը: Նրանք սկսել էին վերագտնել իրենց արմատները: Բայց կար նաեւ կառավարության գաղտնի ծրագիրը՝ վերաբնակեցնելու որոշ տարածքներ: Հաշվի առնելով, որ Դիարբեքիրը դարձել էր քրդերի ակտիվ գործողությունների թեժ կենտրոնը, նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը սանձազերծել է բնաջնջման եւ վերաբնակեցության լայնածավալ մի պատերազմ քրդերի դեմ: Սիրիացի շատ փախստականներ են բերվել այդ տարածաշրջան:

Թուրք ճանաչված պատմաբան Թաներ Աքչամը «Նյու Յորք Թայմսում» ահա թե ինչ է գրում. «Էթնիկական եւ կրոնական վեճերը ժողովրդագրական մեքենայությունների միջոցով լուծելը թուրքական կառավարության քաղաքականությունն է, որն արդեն մեկ դարուց ավելի գործադրվում է: Սուրի շրջանում կատարվող վերջին ժամանակների զարգացումները այս տեսանկյունից պետք է դիտարկել»:

Էրդողանը նաեւ յուրացրել է Լենինի մարտավարությունը, բայց կիրառում է հակառակ հերթականությամբ՝ մեկ քայլ առաջ, երկու քայլ ետ սկզբունքով: Որոշ առգրավված անշարժ գույքեր հայկական համայնքին վերադարձնելուց, եւ Եվրոմիության գովասանքին արժանանալուց հետո, հանկարծ նա փոխելով իր քաղաքականությունը սկսեց նորանոր կալվածներ առգրավել:

Փայլանի «արշավանքի» հաջորդ դրվագը տեղի ունեցավ թուրքական խորհրդարանում ապրիլի 21-ին, երբ նա ներկաներին ցույց տվեց 1915-ին սպանված Օսմանյան խորհրդարանի 15 հայ պատգամավորների նկարները, եւ կառավարությունից պահանջեց նրանց անցյալի կարգավիճակին համապատասխան վերաթաղում կատարել:

Մինչ այս հանդուգն արարքն էր տեղի ունենում ի լուր աշխարհի, հայկական պատրիարքարանի տեղապահ Արամ եպիսկոպոս Աթեշյանը եկեղեցում ընթերցում էր Էրդողանի երկդիմի ուղերձը «մեր ընդհանուր ցավի» մասին, որը վերահաստատում է այն միտքը, թե եթե հայեր սպանվեցին Առաջին համաշխարհայինի ընթացքում, ապա թուրքեր եւս սպանվեցին, այնպես որ հաշիվները փակված են:

Իսկ վերջին դրվագը տեղի ունեցավ մայիսի 2-ին դարձյալ խորհրդարանում, երբ Փայլանի վրա հարձակվեցին AKP կուսակցության անդամ պատգամավորները: Տեսարանը սարսափազդու էր: Էրդողանի կուսակիցները, բարետես հագնված, վայրի կենդանիների նման հարձակվեցին Փայլանի վրա, մինչ վերջինիս քրդամետ HDP կուսակցության անդամ պատգամավորներից մեկը հարձակվողներին դիմելով գոռում էր. «Դուք այս հողի տերը չեք: Դուք բռնազավթել եք այն եւ քարուքանդ արել հույների, հայերի եւ ասորիների քաղաքակրթությունը: Դուք կարող եք սպանել ինձ, բայց ես պարտավոր եմ բարձրաձայնելու ճշմարտությունը»: Տեսարանը կարելի էր բնութագրել «թուրքական ժողովրդավարությունը գործողության մեջ» բառերով:

Կռիվը ծագեց խորհրդարանական մի հանձնախմբում, որը քննարկում էր HDP կուսակցության անդամ-պատգամավորներին անձեռնմխելիության իրավունքից զրկելու հարցը: Արժե այստեղ ավելացնել նաեւ ԱՄՆ-ի պետքարտուղարության մեկնաբանությունը, ցույց տալու համար Մ. Նահանգների քաղաքականության անհեթեթ ու ծաղրական բնույթը: Պետքարտուղարության խոսնակ Ջոն Քիրբին հայտարարեց. «Դե, դարձյալ, որպես խորհրդարանական ժողովրդավարական երկիր, Թուրքիան վերահաստատեց իր դիրքորոշումը ժողովրդավարական գործընթացների հանդեպ՝ որոշելու համար, թե ով իրավունք ունի օգտվելու անձեռնմխելիության իրավունքից, եւ ով՝ ոչ: Նաեւ, թե ինչ հանգամանքներում պատգամավորներին կարելի է զրկել այդ իրավունքից»: Էրդողանի առաջ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի խոնարհումից հետո (նա 6 միլիարդ եվրոյով կաշառեց Էրդողանին սիրիացի փախստականներին իր երկրում պահելու համար, եւ խոստացավ Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցության բանակցությունները վերսկսել) կարծես հերթը պետքարտուղարությանն է եկել գլուխ ծռելու թուրք բռնատերի առաջ:



Փայլանի դեմ հարձակումը էթնիկական ատելության փայլուն դրսեւորում էր:

«Չափազանց պարզ է, որ ես էի նրանց թիրախը: Մեծ թվով պատգամավորներ հարձակվեցին ինձ վրա ծրագրավորված ձեւով: 20-30 վայրկյանների ընթացքում նրանք մոտ 100 անգամ ինձ ձեռքերով ու ոտքերով հարվածեցին: Հետո ռասիստական խոսքեր եւ հայհոյանքներ շպրտեցին երեսիս: Դրանք զուտ վերաբերում էին իմ հայ լինելու հանգամանքին: Նրանք չեն կարողանում մարսել, որ հայ ազգի ներկայացուցիչը մերկացնում է իրենց ստերը եւ հանդգնում է խրոխտ կանգնել իրենց առաջ: Նրանք սովոր են հայերին տեսնելու խոնարհի կարգավիճակում: Իր իրավունքների համար պայքարող հայը մարտահրավեր է, որին պետք է լինչի դատաստանին ենթարկել», նշել է Փայլանը աղմկալի իրարանցումից հետո:

Կարո Փայլանը, Սելահեդդին Դեմիրթաշն ու HDP ամբողջ խորհրդարանական ֆրակցիան տեղի ունեցածը բնութագրում են որպես Էրդողանի կողմից բռնատիրական ռեժիմի հաստատման խորհրդանշական քայլ: Դրա համար էլ Էրդողանը երկսայր պայքար է ստիպված ծավալում: Առաջինը՝ դաժան եւ անգութ պայքար՝ քուրդ բնակչության դեմ, սպանությունների եւ տեղահանությունների միջոցով, իսկ երկրորդը՝ օրենսդրական ակտ պատգամավորական անձեռնմխելիությունից զրկելու բոլոր նրանց, ովքեր դեմ են իր իշխանությանը:

Արեւմուտքում մեծ հարգանք վայելող թուրք լրագրող Ամբերին Զամանը մայիսի 9-ին գրում էր. «Վերջին ամիսներին Վաշինգտոնը հետ է ընկրկում (իր սկզբունքներից) կարողանալ «հարմարվելու» համար Թուրքիայի քմահաճույքներին: ...Վաշինգտոնը գրեթե ոչինչ չի նշում մարդու իրավունքների այն կոպիտ խախտումների մասին, որ ըստ ընդդիմադիր օրենսդիրների, Թուրքիայի անվտանգության մարմինները գործադրում են երկրի հարավ արեւելյան շրջաններում տեղակայված PKK-ի մարտիկներին ոչնչացնելու նպատակով»:

Այս կոտորածը նման է Ռուանդայում տեղի ունեցած ցեղասպանությանը, որի ամբողջ ընթացքում նախագահ Քլինթոնը անտեսում էր կատարվածը, բայց պաշտոնից հեռանալուց հետո պարտավորված զգաց ներողություն խնդրել Քիգալիում զոհվածների ընտանիքներից: Երեւում է Օբաման էլ հետեւելու է քաղաքական նպատակահարմարության նրա օրինակին:

Դեպի միապետական իշխանություն իր ճանապարհին Էրդողանը դուրս մղեց նաեւ իր ամենահավատարիմ դաշնակից՝ վարչապետ Ահմեդ Դավութօղլուին: Քաղաքական այդ քայլի առիթով Մետին Գյունչանը գրում է. «Կար նաեւ վարչապետի հրաժարականի հարցը: Ըստ Մուսթաֆա Աքյոլի, դեպի բացարձակ միանձնյա իշխանություն ճանապարհին նա Էրդողանի համար դարձավ սոսկ «չնչին անախորժություն»: Աքյոլը գրել էր, որ «Դավութօղլուի միակ «դավաճանությունը» համեմատաբար առավել չափավոր եւ նվազ բռնապետական լինելն էր»: Ի դեպ, Դավութօղլուն էր ճարտարապետը Անկարայի սիրիական քաղաքականության, որը բացարձակ ձախողանք դարձավ»:

Այժմ, երբ վարչապետի պաշտոնի ամենահավանական թեկնածուն Էրդողանի փեսան՝ Բերատ Ալբայրաքն է, դինաստիական սուլթանության ճանապարհը լրիվ հարթված է: Որպես հաջորդ քայլ մնում է խորհրդարանի վերակազմավորումը, որը վերացնելու է ընդդիմադիր պատգամավորների անձեռնմխելիությունը եւ «անհնազանդության» դրսեւորման դեպքերում բանտարկելու է նրանց, ճանապարհ բացելով նրանց փոխարեն ընտրելու պատգամավորներ իր կուսակցությունից: Եվրոպայում HDP-ի ներկայացուցիչ Էյուբ Դորույի կարծիքով, այդ քայլը կարող է առաջնորդել դեպի քաղաքացիական պատերազմ, քանի որ մերժելու է քրդերի, հայերի, ասորիների, եզդիների, ալեւիների եւ այլ փոքրամասնությունների ներկայությունը խորհրդարանում. մի բան, որ Եվրոմիությունը ողջունել էր որպես «ժողովրդավարական առաջընթաց»:

«Հարցը քննարկվելու է հունիսի 16-ին կայանալիք լիակազմ նիստի ժամանակ, եւ ընդունվելու դեպքում HDP-ի 59 պատգամավորներից 46-ը զրկվելու են իրենց անձեռնմխելիության իրավունքից եւ բանտարկվելու են: Նման իրավիճակում, Թուրքիայում քրդական շրջաններում լարվածությունը սաստկանալու է, ինչը քաղաքացիական պատերազմի եւ տեղահանությունների պատճառ է դառնալու», զգուշացրել է Դորուն:

Էրդողանը «ահաբեկչություն» հասկացությունը ընդլայնել է, եւ դրանում ընդգրկել նաեւ լրագրողներին, ակադեմիական ոլորտի աշխատողներին, անկախ քաղաքական գործիչներին եւ բոլոր նրանց, ովքեր խոչընդոտ կհանդիսանան սուլթանական գահին բազմելու իր տենչանքին:

Մյուս կողմից, իր իսկ որդեգրած արժեքները կոպտորեն խախտելով, Մ. Նահանգների վարչակազմը կույր է տալիս «ահաբեկչություն» հասկացողության այս նոր, էրդողանական տարբերակը եւ հույսը դնելով «Թուրքիայի սեփական ժողովրդավարական գործընթացների» վրա, լուռ ականատեսը դառնում Անկարայում իրականացվող զտումներին:

Արեւմուտքը ստեղծելով մի հրեշի, այժմ ստիպված է խուսանավել այդ հրեշի պատրաստած գազանային օրենքների շրջանակներում:

Փայլանը, Դեմիրթաշը եւ նրանց գործընկերները պատրաստ են պատժամիջոցների ենթարկվել: Նրանք պատրաստ են դրանց հանուն իրենց դավանած սկզբունքների եւ համոզմունքների: Ցինիկ կարող է թվալ, բայց խորհրդարանում բացահայտ հարձակումների ենթարկվելուց հետո Փայլանի համար երեւի բանտն ավելի ապահով վայր կլինի, քան ազատության մեջ լինելը: Եթե Հրանդ Դինքին բանտարկեին ժամանակին, նա մի գուցե ողջ կլիներ հիմա:

Կարո Փայլանը գլուխը բարձր, հպարտ կանգնած է լինելու ինչպես բանտում, այնպես էլ բանտից դուրս, ինչպես Նելսոն Մանդելան:

Նա գլուխը բարձր հպարտ կանգնած է լինելու այն բանի համար, որ կարողացավ բարձրաձայնել հօգուտ օսմանյան դարաշրջանի հայ խորհրդարանական պատգամավորների, հօգուտ բոլոր մյուս զոհերի եւ հօգուտ վերապրողների, որովհետեւ նա մեր ժամանակների իսկական հերոս է:

**Դետրոյթ, ԱՄՆ**

**Թարգմ. Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**

AZG NEW SHABAT.QXD 19/05/2016 21:41 Page 5



# Վալս՝ ահաբեկիչների հետ

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Հո չե՞ք մտածում, որ Սերգեյ Վիկտորովիչ Լավրովը, Ջոն Ֆորբս Քերրին, Ֆրանսիայի եվրոպական հարցերով պետնախարար Արլեմ Դեզիրին եւ Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Ֆեդերիկա Մոգերինին Վիեննա էին ժամանել որպեսզի քննարկեն Ղարաբաղի հարցը: Ավելի ճիշտ՝ միայն Ղարաբաղի հարցը: Ճիշտ է, երբ բոլորն արդեն հավաքված են եղել Վիեննայում, ՌԴ ԱԳ նախարար Լավրովը հայտարարել էր, թե «այս պահին գլխավոր հարցերն են Ղարաբաղը եւ Սիրիան», բայց, օրինակ Լավրով-Քերրի հանդիպման ժամանակ (որն, ի դեպ, եւս տեղի է ունեցել նախորդ օրը Վիեննայում եւ ինչը գոնե միջազգային փաղաքականության համատեքստում անհամեմատ ավելի կարեւոր է, քան Սարգսյան-Ալիեւ հանդիպումը) օրակարգում է եղել Սիրիայի հարցը, ավելին, երբ Վիեննական գործուղումից հետո ՌԴ ԱԳ նախարար Լավրովն ամփոփել է այն, տասներկու րոպե խոսել է, որից 5 րոպեն՝ Ղարաբաղից, 7-ը՝ Սիրիայից:

Իսկ ի՞նչ է կատարվում Սիրիայում: Չէ, սկզբից չենք գա եւ մանրամասն չենք ներկայացնի, այլ հիմա, հենց այս օրերին, այնտեղ ի՞նչ դրություն է: Տարբեր խմբավորումներ, որոնցից ամենամեծը «Իսլամական պետություն» կոչեցյալը, սեփականացրել են Սիրիայի տարածքի զգալի հատվածները եւ այնտեղ բռնապետություններ են հաստատել: Օրինակ հենց Վիեննայում տեղի ունեցող քննարկումների ժամանակ լրահոսում հայտնվեց մի տեղեկատվություն, որ «Իսլամական պետություն» կոչեցյալում իսլամիստները ստիպել են ազգությամբ եզդի կնոջը ուտել սեփական երեխային: Շարունակե՞մ... Չգիտե՞ն այս մասին պարոնայք Լավրովը, Քերրին, Դեզիրին եւ տիկին Մոգերինին: Դեզիրին դեռ կարող է չիմանալ, Ֆրանսիայի եվրոպական հարցերով պետնախարարը պարտավոր չէ իրազեկ լինել ասիական տարածաշրջանում գտնվող Սիրիայի հարցերից, բայց մյուսները հո գիտեն: Գիտեն եւ ոչինչ չեն անում, նկատի չունեմ՝ Սիրիայում, Սիրիայում թերեւս միայն ալարկոտներն ու Նոր Զելանդիան են, որ ոչինչ չեն անում, նկատի ունեմ՝ «Իսլամական պետություն» կոչեցյալի դեմ: Մինչդեռ դրա դեմ բան անելը, շեշտում եմ՝ դրա դեմ, ոչ թե հետ բան անելը շատ կարեւոր է նաեւ մեզ համար եւ այս պարագայում առաջին հերթին մեզ համար ու ահա թե ինչու: Բանն այն է, որ «Իսլամական պետություն» կոչեցյալը դասական բռնապետություն է, ամենաիսկական ահաբեկչական խմբավորման ձեռքում հայտնված տարածք եւ այդ տարածքում բնակվող ժողովուրդ, որը ԻՊ-ի ձեռքում, մեղմ ասած, արյունաքամ է լինում: Հետեւաբար, եթե միջազգային հանրությունը ԻՊ-ի դեմ, հանուն ԻՊ-ի վերահսկողության տակ գտնվող տարածքում ապրող ժողովրդի ոչինչ չի անում, նշանակում է խրախուսում է աշխարհում բռնապետությունը եւ ահաբեկչությունը: Այլ կերպ ասենք, եթե Մոնղոլիայի մայրաքաղաք Ուլան Բատորի միջնակարգ դպրոցներից մեկի ութերորդ դասարանում սովորող Ջուն Պուն որոշել է մեծանալ եւ վերստեղծել Չինգիզ խանի երկիրը՝ Մոնղոլիան դարձնելով բռնապետական կայսրություն, ապա նա, եթե ուշադիր հետեւի միջազգային գործընթացներին, ապա հանգիստ սրտով կարող է աշխատել իր նպատակն իրագործելու ուղղությամբ, քանի որ աշխարհում, ինչպես տեսնում ենք՝ դրա Սիրիա հատվածում, օրինակ, բռնապետությունն ու միջազգային ահաբեկչությունը, այո, ողջունվում են, ողջունվում են, քանի որ դրա դեմը հենց տեղում չի առնվում, այդ չարիքներն արմատախիլ չեն արվում:

Բայց դառնանք մեզ: Մենք էլ ի՞նչ բռնապետություն եւ ակաբեկչական խմբավորում գիտենք: Չասենք Հյուսիսային Կորեան, քանի որ այն շատ հեռու է, մեզ շատ մոտիկ, ավելին՝ հարեւան: Ադրբեջա՞նը, բայց ինչո՞ւ հարցականով: Չէ որ մարդկանց գլխատելը, գլխատողին հերոսացնելը, ՀՀ զինված ուժերում ծառայող զինվորի գլուխը արնախում դեմքով ցուցադրելը, խաղաղ բնակչության վրա գրեթե ամենօրյա կրակահերթ արձակելը, ծեր ամուսիններին դաժանաբար սպանողները ամենաիսկական ահաբեկիչներն են: Սրան գումարենք Ադրբեջանի ներսում տեղի ունեցող «խիստ ժողովրդավարական» գործընթացները պետականից տարբեր կարծիք ունեցող մարդկանց հանդեպ, եւ ի դեմս Ադրբեջանի կստանանք բռնապետություն եւ ահաբեկչության որջ: Հիմա, չգիտե՞ն այս մասին միջազգային դեմքերը, իհարկե գիտեն, իսկ ի՞նչ են անում սրա դեմ: Իսկ ի՞նչ են անում ԻՊ-ի դեմ, որ Ադրբեջանի դեմ ինչ-որ բան անեն: Ի դեպ, նկատե՞լ եք, որ ինչպես ԻՊ-ից, այնպես էլ Ադրբեջանից նավթի հոտ է գալիս...

Եւ քանի դեռ այդպես է, մեզ մնում է միայն ուրախանալ, որ Լավրովը մեր կողքին է նստում եւ մեզ հետ է կատակներ անում, Ալիեւը՝ հոր թաղման իր դեմքով է նստում, նախարար Դեզիրին հավանաբար հիշում է իր եվրոպական գործերը, ավելի կոնկրետ՝ այն օրը, երբ ինքը Ատլանտյան օվկիանոսի լիսաբոնյան ափին զմայլվում էր Եվրոպայի մայր մտնող արեւի տեսարանով, չզգալով, որ իրականում Եվրոպայի արեւն իրոք մայր է մտնում, Քերրին ուրախ է, քանի որ ոտքն էլ շատ չի ցավում, տիկին Մոգերինին էլ մտածում է, որ հանկարծ այնպես չլինի, որ Սարգսյան-Ալիեւ հունիսյան հաջորդ հանդիպումը տեղի ունենա հունիսի 16-ին, քանի որ հենց այդ օրը՝ 1973-ին, Հռոմում ինքը ծնվեց:

Ու այս բոլորով ուրախ են, որ ղարաբաղյան հակամարտության կողմերը կամք են դրսեւորում՝ հակամարտությունը լուծել բացառապես խաղաղ եւ փոխզիջումային ճանապարհով: Ի դեպ, ԻՊ-ի հետ էլ կարելի է խնդիրը լուծել խաղաղ եւ փոխզիջումային ճանապարհով, թե՞ չի կարելի... Ամեն դեպքում արժի կամք դրսեւորել եւ վիեննական վալսի հրավիրել Աբու Բաքր ալ Բաղդադիին: Ի դեպ, նրա ծննդյան օրն էլ հունիսի 29-ին է, այնպես որ այդ օրն էլ չհավաքվեք, պարոնայք, Իլհամ Ալիեւը չի կարող գալ. նեղ շրջապատով նշելու են Աբու Բաքրի ծնունդը: Հունիսի 30-ին էլ չեն կարող. այդ օրը հազիվ թե նախագահ Սարգսյանը գերադասի իր ծննդյան օրը նշել Իլհամ Ալիեւի ընկերակցությամբ:



# Մեսրն ու մարդը

**Սահարան, չնայած անապատ է, բայց հող է: Ավելին, այն կիսող աֆրիկյան երկրների (թվով 8) տարածքների զգալի մասն է, որոշների՝ մեծ մասը: Այսինքն, եթե դուք, օրինակ, ալժիրցիներին ասեք՝ ձեր երկրի տարածքից 8 քառակուսի կիլոմետր տվեք մեզ, չէ՞ որ անապատ է, իսկ անապատում ոչ տանձ է աճում, ոչ կով է արածում, ոչ էլ նավթ է դուրս գալիս այնտեղից, ձեզ կպատասխանեն, այլ հարց է՝ ինչ զենքով:**

**ԼՂ-ի շրջակա տարածքները, ինչպես Արցախում են ասում՝ Արցախի Հանրապետության անքակտելի մասը, կամ ինչպես Հայաստանում են ասում՝ մեր անվտանգության գոտիները անապատ չեն, չնայած այդ տարածքներում բնակվող մարդիկ իրենց թվով քիչ են տարբերվում Սահարա անապատում բնակվողներից: Այնուամենայնիվ այդ տարածքներն ավելի հող են, քան Սահարան, եւ ուրեմն դրանց պահպանումը մեզ համար ռազմավարական նշանակություն ունի (հողի չռազմավարականը ո՞րն է): Այնպես է ստացվել, որ հենց այդ տարածքներից, ինչպես նախագահ Սարգսյանն է Վիեննայից վերադարձի ճանապարհին, ինքնաթիռում որոշ լրագրողների ասել, 8 քառակուսի կիլոմետրը ապրիլյան սրացումների արդյունքում մենք թողել ենք Ադրբեջանին: Ըստ նախագահի՝ այդ տարածքները մեզ համար ռազմավարական որեւէ նշանակություն չունեին, այսինքն դրանց կորուստը մեզ համար ռազմավարական չէ, հոգեբանական է, դե այսինքն Ադրբեջանն իր ժողովրդին կասի, թե տեսեք, դեռ քիչ, բայց մեր հողերը հետ բերեցինք:**

**Բայց ի՞նչ գնով, նկատի չունեմ ադրբեջանցիները, նկատի ունեմ՝ մենք, երբ ասում ենք, թե չի կարելի հակառակորդի մոտ թողնել անգամ մեկ թիզ հող, պետք է ժամ առաջ առաջ նետվել եւ հետ բերել կորցրածը, ի՞նչ գնով, ավելի ճիշտ՝ ո՞ւմ գնով: Նրանք, ովքեր առաջ են հրում, առջեւում չեն, ուրեմն չեն էլ գնալու, գնալու են նրանք, ովքեր արդեն առաջին գծում են, իսկ առաջին գծում նրանք են, որոնց վերադարձին մենք սպասում ենք: Պատերազմն էլ միակ տեղն է, որտեղ առաջ գնալը միշտ չէ, որ լավ է, ավելի ճիշտ՝ միանշանակ չէ, առաջ գնալը պատերազմում զոհեր են, ավելի շատ՝ քան տեղում մնալը: Ու այստեղ առաջանում է ամենակարեւոր հարցը՝ մա՞րդը, թե՞ մեսրը...**

**Մեսրը՝ տարածքային ամբողջականությունն է, մարդը՝ ազգերի ինքնորոշումը. Չկա մեսր, խախտվել է տարածքային ամբողջականությունը, չկա մարդ՝ չկա ազգերի ինքնորոշում: Ծանո՞թ սկզբունքներ են: Թերեւս Հայաստանում (գուցե նաեւ Ադրբեջանում) այս սկզբունքները եւ սրանցից ածանցյալ այլ սկզբունքներ «Մադրիդի Ռեալ» ֆուտբոլային ակումբից հետո երկրորդ հայտնի մադրիդյանն են: Այդ սկզբունքներով, որոնք բոլորովին վերջերս ամբողջությամբ հրապարակվեցին, ենթադրվում է ԼՂ-ի շրջակա տարածքների վերադարձ Ադրբեջանին, փախստականների վերադարձ՝ իրենց բնակության վայրերը, միջազգային խաղաղապահների մուտք՝ հակամարտության գոտի եւ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակը որոշելու համար տեղում, տեղի բնակչության ազատ կամարտահայտում (հանրաքվե): Հուսամ՝ ճանապարհային քարտեզը չխախտեցի: Մենք այս սկզբունքներին համաձայն ենք, Ադրբեջանը՝ ոչ: Այսինքն ըստ Բաքվի, այս սկզբունքներով հարցը լուծելը դեմ է իր շահերին, ըստ մեզ՝ մեր շահերին դեմ չէ: Բայց ինչպե՞ս, ուրեմն ԼՂ-ի շրջակա տարածքների հանձնումը մեր շահերին դեմ չէ՞, կոնկրետ ադրբեջանցի փախստականների վերադարձն իրենց բնակության վայրեր (Բաքուն պնդում է, որ նրանց թիվը միլիոնի է հասնում) մեր շահերին դեմ չէ՞, եւ վերջապես, ամենակարեւորը, ԼՂ-ի վերջնական կարգավիճակի անորոշ ճակատագիրը մեր շահերին դեմ չէ՞: Իմ կարծիքով դեմ է, ավելին, ես չեմ կարծում, որ Բաղրամյան 26-ում կամ ՀՀ ԱԳՆ-ի նորակառույց, ի դեպ գեղեցիկ, շենքում որեւէ աշխատող կա, ով կասի, թե մադրիդյան սկզբունքները Հայաստանի շահերին դեմ չեն: Ուրեմն ինչո՞ւ է Հայաստանը համաձայն դրանց: Այստեղ մի նրբություն կա, Հայաստանը ոչ թե համաձայն է դրանց, այլ համաձայն է դրանց հիման վրա բանակցություններ վարելուն, այսինքն Հայաստանը ոչ թե համաձայն է, որ ենթադրենք՝ կոնկրետ ադրբեջանցի փախստականները վերադառնան իրենց բնակության նախկին վայրերը, այլ համաձայն է քննարկելու այդ հարցը, թերեւս, հիշեցնելով, որ ԼՂ հակամարտության հետեւանքով փախստական են դարձել ոչ միայն ադրբեջանցիներ:**

**Բայց ամեն դեպքում՝ «համաձայն եմ քննարկելու տարածքների վերադարձը» տարածքների հանձնում չի ենթադրում, ուրեմն ինչո՞ւ է Հայաստանը համաձայն՝ քննարկելու տարածքների վերադարձը: Հենց այստեղ շրջանը փակվում է, մարդիկ. բանն այն է, որ սա մեսրի եւ մարդու ընտրությունն է, բայց ոչ թե Հայաստանի իշխանությունների ընտրելիքը (թեկուզ եթե այդ իշխանությունները լիգիտիմ են), այլ հայ ժողովրդի հանրաքվեն՝ մեկ հարցով՝ մա՞րդը, թե՞ մեսրը: Ի վերջո, եթե հող տալը որոշում են իշխանությունները, եւ եթե իսկական Հայաստանը տիգրանմեծյան ծովից ծովն է, ապա Տիգրանից հետո (որին, ի դեպ, ադրբեջանցիներն անվանում են՝ ադրբեջանցի, ում անունով էլ հիմնադրվել է Իրանի մայրաքաղաքը. Տիգրան-Տեգերան-Թեհրան) մեր բոլոր իշխանությունները հող են տվել, հեկտարներով, պատեհական, ուրեմն ռազմավարական նշանակություն ունեցող:**

**Ու մինչ մենք այսօր մտածում ենք, թե ո՞ւմ կողքին կնստեր Սերգեյ Լավրովը՝ Վիեննայում, եթե Ադրբեջանի նախագահը Մեհրիբան Ալիեւան լիներ, կնստեր կրկին Սերժ Սարգսյանի կողքին, Հայկական հարցը՝ անկախ նրանից, թե ի՞նչ կասի ԱՄՆ նախագահը ապրիլի 24-ին, հարցը մնում է նույնը՝ մա՞րդը, թե՞ մեսրը: Եթե մեսրը, ապա պատերազմ է (քանի որ միջնորդները հետ են քաշվում, որովհետեւ իրենց առաջարկությունները մերժվում են), անկանխատեսելի ելքով եւ Արցախի անորոշ կարգավիճակով: Եթե մարդը, ապա պատերազմ չէ (քանի որ միջնորդները վերահսկում են, որպեսզի պատերազմը չխանգարի իրենց առաջարկությունների կենսագործմանը), բայց Արցախի կարգավիճակը կրկին անորոշ է: Երկու դեպքում էլ հիմնական հարցի պատասխանն անորոշ է, բայց մի դեպքում՝ պատերազմ կա, մյուսում՝ խաղաղապահներ (գուցե ավելի վատ բան):**

**Ուրեմն մենք որի՞ն ենք պատրաստ, կամ ինչ-որ բանի պատրա՞ստ ենք: Չասենք, որ հաղթողը ոչինչ չի զիջում, քանի որ մենք բոլորովին վերջերս Ադրբեջանին 8 քառակուսի կիլոմետր ենք զիջել՝ ընտրելով մարդուն:**

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

*Հ.Գ.-Չնայած ունեցած քիչ մեսրերին՝ 718,3 քառակուսի կիլոմետր, Սինգապուրի բնակչությունն այսօր կազմում է 5մլն 535 հազար մարդ (ավելի շատ, քան ՀՀ-ի եւ Արցախի Հանրապետության բնակչությունը միասին վերցրած): Այսինքն այնպես չէ, որ որքան մեծ է երկրի տարածքը, այնքան մեծ է բնակչության թիվը: Ի դեպ Սինգապուրից ոչ ոք մեսր չի ուզում եւ չի խլում, չի էլ կարող, բայց այս ամենն՝ իմիջիայլոց:*

ՎԱՐԴԳԷՍ ԳՈՒՐՈՒԵԱՆ

# Պոյքոթենք թրքական արտադրութիւնները

Հայկական նպարատուներն ու հագուստեղէնի եւ այլ խանութները ողողուած են թրքական արտադրութիւններով: Որո՞նք են թրքական արտադրութիւններու գլխաւոր յաճախորդները - մենք, հայերս: Անշուշտ ամերիկեան խանութներուն մէջ ալ շատ են թրքական արտադրութիւնները, սակայն ամերիկացիին համար թրքական կամ չինական կամ ֆիլիփինեան ապրանքներուն միջեւ տարբերութիւն չկայ: Կարեւորը որակաւոր եւ քիչ մը աժան ըլլայ, հարցը կը լուծուի:

Ասկէ 101 տարիներ առաջ, եւ երկարած յաջորդ հինգ տարիներուն վրայ Թուրքիա կոչուող պետութիւնը եւ թուրք կոչուող ազգը աւելի քան մէկ ու կէս միլիոն հայ ջարդեցին: Պատմական իրողութիւն մը՝ որ հայերը ամէն տարի, գէթ Ապրիլ 24-ին, կը յիշեն եւ ոմանք եկեղեցիներու մէջ, ուրիշներ հրապարակային, ժողովրդական հաւաքներով կ'ոգեկոչեն, մինչ ուրիշ շատ-շատերն ալ տունը, հեռատեսիլին առջեւ նստած կամ իրենց խանութներուն մէջ, «հոգիով» կը մասնակցին յարգանքի միջոցառումներուն...: Ապրիլ 25-ին արդէն ամէն ինչ մոռցուած է, բացի հայկական թերթերու մէջ, Ապրիլ24-ի առիթով չհրատարակուած յօդուածներու երեւումէն:

Ինչպէ՞ս կրնանք այսքան անտարբեր ըլլալ մեր ազգին ամենաողբերգական դէպքերուն հանդէպ: Մեզմէ իւրաքանչիւրը ընտանեկան անդամ մը ունի զոհուած այդ ահաւոր Եղեռնի ժամանակ: Ոմանց ամբողջ ընտանիքը, գերդաստանը, ամենավայրագ կերպով խողխողուած է: Իսկ մե՞նք, հանգիստ նստած մեր տուներուն մէջ, խոհանոցի պահարաններն ու սառնարանները կը լեցնենք թրքական արտադրութիւններով:

Երեւանէն մինչեւ Պէյրութ, Նիւ Եորքէն մինչեւ Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսքօ, Թորոնթօ եւ Մոնթրէալ, հայկական նպարեղէնի խանութները լեցուն են թրքական արտադրութիւններով - լոլիկի ջուր, բիբարի մածուկ, սուպ ու բլղուր, չորցած պտուղի եւ բանջարեղէնի տեսակներ, ձիթապտուղ եւ պանիր, անուշեղէն եւ պղպեղի ու համեմունքներու տեսակներ, եւ տակաւին շարքը կ'երկարի: Եւ որո՞նք եւ այս արտադրութիւնները մեծաքանակ ներածողները - հայերը, որո՞նք են իրենց նպարատուներուն մէջ թրքածին արտադրութիւնները ծախողները - հայ նպարավաճառները, իսկ որո՞նք են յափշտակողները այս արիւնահոտ ապրանքները - մենք, «հայ» կոչուածներս:

Բազմաթիւ անգամներ, մանաւանդ Ապրիլ 24-ի հանդիսութիւններուն, մաքուր հայեր թերթիկներ կը բաժնեն, որպէսզի «պոյքոթի ենթարկենք» թրքական արտադրութիւնները: Եւ ի՞նչ կ'ըլլայ այդ թերթիկները ստացող «հայ»երուն հակազդեցութիւնը. թերթիկը կը ճմռթկեն ու կը նետեն: Նոյն օրը կամ յաջորդ օրը դարձեալ նպարատունէ մը թրքական ապրանք կը գնեն:

Ամերիկայի մէջ, եթէ ափրիկեան ծագումով ամերիկացիներուն մազին դպչող ըլլայ կամ անոնց դէմ իրաւացի թէ անիրաւ արտայայտութիւնները ունենայ ընկերութիւն մը, կամ անիրաւութիւն մը ընէ իրենց դէմ, եւ եթէ իրենց առաջնորդներէն մին առաջարկէ, որ այդ ընկերութեան արտադրութիւնները պոյքոթի ենթարկեն, ափրիկեան ծագումով Ամերիկացիներուն իննսուն տոկոսը կը հետեւի այդ պոյքոթին եւ ընկերութիւնը ծունկի կը բերեն: Իսկ մե՞նք, այսպէս կոչուած «հայ»ե՞րս, թրքական արտադրութիւններուն դէմ առաջարկուած պոյքոթները պարզապէս կ'անտեսենք: «Ո՞վ է այդ մարդը, որ պիտի որոշէ, թէ ես ի՞նչ տեսակ ապրանք պիտի գնեմ» խօսքը ամենայն անպատասխանատուութեամբ կ'արտաբերենք: Տեսա՞ք ի՞նչ զարգացած, յառաջդիմած, ազատութիւնը սիրող ազգ ենք մենք: Տեսա՞ք ի՞նչ խելացի եւ ինքնուրոյն մտածող անհատներ ենք մենք: Չէ՞ որ մեր նահատակները, մեր ֆէտայիները զոհուեցան ազատութեան համար, հիմա ինչո՞ւ կ'ուզէք մեր ազատութիւնը կաշկանդել... Երբ Կլենտէյլի մէջ թրքական ապրանքներ ներածող հայ վաճառականի մը ըսինք, թէ ինչո՞ւ թրքական ապրանք կը ներածէ, «այդ ձեր գիտնալիք բանը չէ: Մենք կը ներածենք ինչ որ շահաբեր է մեզի համար», ըսաւ...:

Վա՜յ քեզ, ժողովուրդ:

Ինծի համար զարմանալի եւ անհասկնալի է, թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս հայաստանցի վաճառականները Հայաստանի համար թրքական ապարանք կը ներածեն: Սահմանները գոց են, ուրեմն Վրաստանի վրայով այդ ապրանքները Հայաստան կը հասնին: Ո՞ւր են Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնները: Ինչո՞ւ այդ թրքական ապօրինի ապրանքներուն ներածումը կ'արտօնուի: Հա՜, հա՜, իշխանաւորներն ալ շահաբաժին ունին ներածուող ապրանքներէն...: Տակաւին, Երեւանի կարգ մը նպարատուներու ցուցափեղկերուն վրայ «թուրքական ապրանք»ներու թարմութեան մասին գովազդ կ'ըլլայ: Այս է հայերուս հայրենասիրութիւնը, պիտի ըսէինք՝ թրքասիրութիւնը:

Կը գանգատինք, որ Հայաստանէն արտագաղթ կայ: Եթէ հայերս մերժենք թրքական արտադրութիւնները գնել, եւ որոշենք նմանօրինակ հայկական, ռուսական, պարսկական ու չինական ապրանքներ գնել, կրնա՞ք ճշդել այն շահը, որ Հայաստանը կ'ունենայ: Կրնա՞ք գիտնալ, թէ քանի՜ հազար աշխատատեղ պիտի բացուի Հայաստանի մէջ եւ ի՞նչ հարստութիւն պիտի կուտակուի: Հոգ չէ թէ «մեծահարուստները» աւելի եւս պիտի օգտուին, բայց հազարաւոր հայեր գործ պիտի ունենան - գիւղացիները՝ ցանելով, շարժավարները՝ փոխադրելով, ապակեգործարանի բանուորները՝ շիշեր արտադրելով, հարիւրաւորներ՝ գործարաններուն մէջ աշխատելով. շարունակե՞մ:

Արցախի քառօրեայ պատերազմը ցոյց տուաւ, որ ազերիներն ու թուրքերը երբե՛ք պիտի չհանգստանան մինչեւ որ հայն ու Հայաստանը չստրկացնեն, չոչնչացնեն: Ամէն անգամ որ թրքական ապրանք կը գնենք, օգնած կ'ըլլանք թրքական տնտեսութեան եւ նաեւ օգնած կ'ըլլանք, որ անոնք փամփուշտ մը եւս ձուլեն եւ մեր սահման պահող զինուորին սիրտը ծակեն: Գիտէ՞ս, բարեկամ, այն փամփուշտը, որ մեր հայ պատանիին սիրտը խոցեց, քու գնած լոլիկի մածուկի շիշէն եկած շահէն էր:

Ո՞ւր է մեր անձնական արժանապատուութիւնը: Չե՞նք ամչնար: Ամօթ կոչուած զգացումը չունի՞նք: Այսքա՞ն է մեր հայասիրութիւնը, այսքա՞ն է մեր հայրենասիրութիւնը: Այսպէ՞ս պիտի յարգէինք յիշատակը մեր մէկ ու կէս միլիոն նահատակներուն, մեր նորօրեայ հերոս նահատակներուն:

ԱՄՕ՛Թ է:

**Լոս Անճելըս, ԱՄՆ**

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

# Էլի հենվենք սեփական ուժերի վրա, բայց ինչպե՞ս

**Հակառուսական քարոզչության ֆոնի վրա հայոց լրատվամիջոցներում, այդ թվում նաեւ «Ազգ» թերթում, շրջանառության մեջ է դրվել այն թեզը, որ ինքներս մեզ վրա պիտի հույս դնենք: Շատ գեղեցիկ է հնչում, պաթետիկ, եզակի հայրենասիրական: Բայց երկրում կոնկրետ ում վրա պիտի հենվենք եւ ինչի վրա, անհասկանալի է: Պարզ մի օրինակ. մեր միակ հույսն ու ապավենը՝ հայոց բանակը գերազանցապես համալրված է մեզ համար գնով ու որակով մատչելի ռուսական զենքով ու ռազմական տեխնիկայով: Մենք ունե՞նք ռազմարդյունաբերական հզոր համալիր, որը մատակարարեր նման սպառազինություն: Թե՞ ուրիշներից կարող ենք նման զենք գնել Ռուսաստանից հրաժարվելու դեպքում, եւ դրանով դիմակայել թուրք-ազերական ագրեսիային: Մեր շահերի տեսակետից իհարկե չենք կարող անտարբեր լինել Ռուսաստանի կողմից Ադրբեջանին եւս զենք վաճառելու պարագայի նկատմամբ: Ցավոք, մեծերը առանց բացառության միշտ էլ ցինիկ են փոքրերի նկատմամբ, եթե նույնիսկ վերջիններս դաշնակից են ձեւակերպված: Դեգրադացվող մեր երկրի համեմատ օր-օրի հզորացող Ռուսաստանը միեւնույն է՝ իրենն է անելու, պետք է պարզապես իմաստուն լինել ու ձգտել լեզու գտնել նրա հետ: Ռուսաստանի հետ չի կարելի վտանգավոր խաղեր խաղալ թույլի դիրքից: Մեր օրերում ի՞նչ շահեցին Վրաստանը եւ Ուկրաինան իրենց ռազմատենչ հակառուսական քաղաքականությամբ, հենվելով սեփական ուժերի (նացիոնալիզմի), տեսականորեն նաեւ Ամերիկայի եւ Եվրոսոդոմի վրա:**

**Բայց այսօր մեր հայրենյաց երկրում ավելի շատ զարմացնում է մի ուրիշ բան: Ռուսաստանի, Պուտինի, որոշ այլ ռուսաց ղեկավարների հասցեին ի՞նչ ասես չեն ասում հայոց լրատվամիջոցներում, վիրավորական ի՞նչ պիտակներ ասես չեն հնչում հեռուստաէկրաններից: Բանը երբեմն հասնում է նույնիսկ նզովքի, սպառնալիքի, հոխորտանքի: Թվում է մենք ենք միջուկային տերություն եւ ոչ թե հակառակը: Սակայն երբ գործն հասնում է սեփական ղեկավարների անգամ «թերի» գործողությունների քննադատությանը, կրքերը առավելագույնս չափավորվում են: Ո՞ր զգացումն է այս դեպքում գերիշխում: Ստացվում է, որ ռուսներին հրապարակայնորեն փնովելը, ամեն ինչում նրանց մեղադրելը ամենաանվտանգ զբաղմունքն է:**

**Լավ, մի կողմ թողնենք ռուսներին. հայրենասիրության, հայաստանասիրության բարձրագույն նվաճու՞մ է կոռուպցիոն-օլիգարխիական պետությունը, որ ձեւավորել են անկախ Հայաստանի երեք նախագահները: Ի դեպ, նրանցից ո՞րն է արժանացել սեփական ժողովրդի հարգանքին: Միանշանակ՝ ոչ մեկը: Նստած՝ Պուտինի հարստություններն են հաշվում: Բայց սոված երկրում միլիարդներ կուտակած՝ ժողովրդի աչքի փուշը դարձած նախագահներից մեկը ինչու իր միլիարդներից գոնե մեկը չի տրամադրում Ղարաբաղի բանակին: Ինչու Մոնումենտի բազմասենյականոց առանձնատան սեփականատերը այն չի տրամադրում Արցախում զոհվածների ընտանիքներին:**

**Հայաստանի ողբերգությունը ռուսների մեջ չէ, այլ սեփական ղեկավարության: Եվ ամենացավալին այն է, որ երկրի ղեկավարները ոչ մի պատասխանատվություն չեն կրում ժողովրդի հանդեպ, ոչ մի հաշվետվությամբ հանդես չեն գալիս նրա առջեւ: Կառավարում են ինչպես ուզում են, վայելում են իշխանությունը եւ վերջ: Գիտե՞ք Մոսկվայում ու Մոսկվայի մարզում ինչքան եմ հանդիպել կառուցող կամ նորոգող շինջոկատների, որոնց անդամները մեծիվմասամբ եղել են հայ նախկին... ազատամարտիկներ:**

**Այնուամենայնիվ, կարո՞ղ է փոքր պետությունը տնտեսական, ռազմական, քաղաքական ուժ ունենալ համաշխարհային մակարդակով, ստիպելով հաշվի նստել իր հետ: Կարող է, եւ դրա կենդանի վկայությունը Իսրայելն է: Հազարամյակներ հետո վերադառնալով ավետյաց երկիր, հրեա ժողովուրդը հիմքից վերականգնեց իր պետականությունը Հայաստանից էլ փոքր տարածքի վրա եւ կարողացավ իրեն հաստատել աշխարհի հզորների շարքում: Եվ այդ ասպարեզում անուրանալի է այդ պետության խելամիտ ու ազգասեր ղեկավարների ակնառու դերը:**

**Ներկայացնենք վերահառնած Հրեաստանի ներկայի որոշ բնութագրումներ, Հայաստանի հետ համեմատության անշնորհակալ գործը թողնելով «Ազգի» ընթերցողներին:**

**Իսրայելի տարածքը կազմում է 22072 քառակուսի կիլոմետր, բնակչությունը՝ մոտ 8,5 միլիոն:**

**1916 թվականի պետական բյուջեն կազմել է 343, 3 միլիարդ շեկել (1 շեկելը՝ 3, 488 ամերիկյան դոլար):**

**Ինդուստրիալ երկիր է դինամիկ զարգացող տնտեսությամբ: 2014 թվականին ազգային համախառն արտադրանքը մոտ 306 միլիարդ դոլար էր, մեկ շնչի հաշվով՝ 38 հազար դոլար:**

**Իսրայելի պաշտպանության բանակը հիմնականում զինված է բուն Իսրայելում արտադրվող բարձրտեխնոլոգիական սպառազինությամբ: ԱՄՆ-ից, Ռուսաստանից ու Ֆրանսիայից հետո երկիրն աշխարհում 4-րդ տեղն է գրավում զենքի ու պաշտպանական տեխնիկայի արտահանման ասպարեզում:**

**Ըստ տարբեր աղբյուրների, Իսրայելը տնօրինում է 80-ից ավելի միջուկային մարտալիցք:**

**Համաշխարհային լիդերներից մեկն է անօդաչու ռազմական ավիացիայի ասպարեզում:**

**Այն ութ երկրներից մեկն է, որոնք ի վիճակի են ինքնուրույն արտադրել ու արձակել արբանյակներ:**

**Մոսսադը համարվում է աշխարհի լավագույն հատուկ ծառայություններից մեկը:**

**Երկիրն ունի 53 օդանավակայան:**

**Որպես գիտության ու նորագույն տեխնոլոգիաների խոշորագույն կենտրոն, Իսրայելը տեխնոլոգիապես առավել գրագետ բնակչություն ունեցող երկրներից մեկն է աշխարհում: Իսկ բնակչության մեկ շնչի հաշվով առաջինն է գիտնականների, գիտական աշխատանքների եւ գրանցված արտոնագրերի քանակով:**

**Միայն 2002-2011 թվականներին Իսրայելի 6 քաղաքացիներ դարձել են գիտության բնագավառի Նոբելյան մրցանակի դափնեկիր:**

**Առողջապահության բնագավառում Իսրայելը 28-րդն է աշխարհում:**

**Սեփական գյուղատնտեսական հասվածն ապահովում է երկրի սննդամթերքների 95 տոկոսը:**

**ԱՄՆ-ից հետո երկրորդ երկիրն է նոր բացվող ընկերությունների քանակով: Աչքի է ընկնում «Բիզնեսի վարման թեթեւության» բարձր վարկանիշով:**

**Մոսկվա**

***Խմբագրության կողմից.-*** *Հեռու՛ մեզանից հակառուսական որեւէ տրամադրություն: Մեր թերթի հասցեին ակնարկված մեղադրանքը ճիշտ չէ: Սակայն, այո՛, մենք համոզված ենք, որ մեր հույսը առաջին ու վերջին հերթին պետք է դնենք մեզ վրա, ինչպես մեր հոդվածագրի գովերգած Իսրայելն է իր հույսը դրել իր եւ, սա պե՛տք է շեշտել, իր հզորագույն Սփյուռքի վրա: Բայց հարկավոր է հարցերը դիտարկել իրենց պատմական շարժընթացի մեջ: Մանր-մունր բախումները չհաշված՝ Իսրայելը 1948 թ.-ից սկսած իր հարեւանների դեմ հինգ պատերազմ է մղել, որոնցից չորսում ունեցել է իր պաշտպան Մ. Նահանգների անվերապահ եւ անմիջական աջակցությունը: Բավական է հիշել միայն 1967-ի Վեցօրյա եւ 1973-ի Յոմ Քիպուրի պատերազմները, որոնց ամբողջ տեւողության ընթացքում Մ. Նահանգներից մինչեւ Թել Ավիվի «Բեն Գուրիոն» եւ այլ օդանավակայաններ ձգվել են ռազմական օգնության օդային կամուրջներ, դեռ չհաշված ամերիկյան 6-րդ նավատորմի պարեկային տեւական պաշտպանությունը Միջերկրականի ափամերձ ջրերում, ինչպես նաեւ տարեկան 10-15 միլիարդ դոլարի ամերիկյան օգնությունները հրեական պետությանը: Մենք մեր դաշնակից Ռուսաստանից ոչ թե նման օգնություն ենք ակնկալում, այլ՝ առնվազն քաղաքական հստակ կեցվածք, այնպիսին՝ որը կզգաստացնի ոչ միայն Բաքվին, այլեւ Անկարային: Իսկ եթե չենք ստանում դա, ապա թույլ տվեք հարցնել՝ ո՞ւմ վրա դնենք մեր հույսը, եթե ոչ՝ ինքներս մեր:*

AZG NEW SHABAT.QXD 19/05/2016 21:41 Page 7



# Ընտրական օրենսգրքի խորամանկ ժպիտը

Ընտրական նոր օրենսգրքի համար կարեւոր պայման կար հատկապես միջազգային շրջանակներից՝ այն լայն կոնսենսուսով ընդունելու: Սակայն խորհրդարանական ընդդիմության գոնե երկու միավոր պնդում էին, որ իրենց կարեւոր առաջարկները չեն ներառվել դրանում, ինչի առթիվ նրանց խոստացվեց դեռ մի արտահերթ նիստ՝ մնացած խնդիրները քննարկելու: Արտահերթ նիստը տեղի կունենա մայիսի 25-ին: Այսպես, թե այնպես՝ նոր Ընտրական օրենսգիրքն Ազգային ժողովի այս քառօրյայում ընդունվեց նաեւ երկրորդ ընթերցմամբ, շնորհավորում ենք իշխող կուսակցությանը, որ համամասնական անվան տակ լավ էլ մեծամասնական ընտրակարգ անցկացրեց, ամրագրելով վարկանիշային քվեարկություն կոչվածը, որի համարժեքությունը միայն փողի ու լծակների տիրապետողների հաղթանակ է նշանակելու: Համենայնդեպս՝ ընդդիմադիրները պնդում են, որ խեղաթյուրվել է համամասնական կարգի գաղափարը:

Մի քանի կարեւոր դրույթ հիշեցնենք. ըստ նոր ԸՕ-ի՝ ընտրությունները կուսակցական ցուցակներով են լինելու, 100 տոկոս համամասնական ընտրական կարգով: Որեւէ կուսակցության՝ բացարձակ մեծամասնություն չստանալու դեպքում, եթե ամենաշատ ձայները հավաքած կուսակցությունը երեք օրվա ընթացքում չկարողանա կոալիցիա կազմել ձայների քվեով երկրորդ տեղը գրաված կուսակցության հետ, ապա տեղի կունենա երկրորդ փուլ՝ ամենաշատ ձայները հավաքած երկու կուսակցության մասնակցությամբ: Առաջին եւ երկրորդ փուլերում հաղթող ուժը 2/3-ից ավելի քվե չի կարող ունենալ, մյուս մանդատները բաշխվելու են մյուս ուժերի միջեւ:

Վերադառնալով վարկանիշային քվեարկություն հասկացությանը, որ ներմուծված է նոր Ընտրական օրենսգրքում եւ ըստ որի պետք է ձեւավորվեն նաեւ տարածքային ցուցակներ, ամրագրվում է, որ տեղական ցուցակներում ընդգրկված թեկնածուներին տրված քվեն նաեւ կուսակցությանը տված քվե է համարվելու: Սա կբերի նրան, որ այդ ցուցակները գլխավորեն տեղական կամ հանրապետական նշանակության փողատերերը, տարբեր տրամաչափի պաշտոնյաները, թաղային «հեղինակությունները», որոնք էլ տարբեր լծակներ եւ նյութական շահագրգռություններ գործածելով՝ ձայն կստանան, սա էլ համամասնական կարգը կվերածի թաքնված մեծամասնականի. 13 ընտրատարածքում 13 օլիգարխ կգլխավորեն ցուցակը, իրենցից հետո թողնելով եւս մի երեքչորս «հեղինակավորի», ու նվազագույնը հիսուն հոգի վարկանիշային քվեարկությամբ կանցնի խորհրդարան: Նրանք, բնականաբար, կներկայացնեն ներկայիս իշխող կուսակցությունը կամ նրանց մերձ շրջանակները: Այդպիսով՝ հենց միայն Ընտրական օրենսգրքում վարկանիշային քվեարկության առկայությունը ցույց է տալիս, որ Հայաստանում ոչ ոք լրջորեն չի պայքարելու մենաշնորհի ու կոռուպցիայի դեմ, այլապես որտեղից կգոյանան վարկանիշ ապահովելու ահռելի միջոցները:

## Ադրբեջանի բանկային համակարգը լուրջ խնդիրներ ունի

Ադրբեջանի բանկային եւ ֆինանսական համակարգի վերաբերյալ հետաքրքրական փաստեր է հրապարակել Հայաստանի Կենտրոնական բանկի նախագահ **Արթուր Ջավադյանը**, խորհրդարանում պատասխանելով պատգամավոր **Թեւան Պողոսյանի** հարցին:

Ադրբեջանում վերջին զարգացումները, գումարած Արցախի սահմաններին սանձազերծած պատերազմում հայկական կողմից ստացած դասը բավական լուրջ հարված են հասցրել Ադրբեջանի բանկային համակարգին եւ տնտեսությանը: Տեղի է ունեցել կտրուկ արժեզրկում, Ադրբեջանի բյուջեն ըստ այդմ մի քանի անգամ նվազել է: Ընդ որում՝ անգամ Ալիեւի եւ Ադրբեջանի կենտրոնական բանկի հրապարակած տվյալներն իրար հետ չեն համընկնում: Նրանց բոլոր բանկերը ֆինանսական խնդիրների առաջ են կանգնած, ամենամեծ բանկի ղեկավարը, որ իշխանական շրջանակների հետ էր կապված, ձերբակալվել է, այդ պատմությանն է առնչվում նաեւ Ադրբեջանի ազգային անվտանգության ղեկավարի եւ մի քանի գեներալների ձերբակալությունը :

Ադրբեջանի բանկային համակարգը հայտնվել է բավականին ծանր վիճակում, լուրջ սահմանափակումներ կան ֆինանսական բոլոր տեսակի գործառնություններում: Երկրում արգելվել է արտարժույթի օգտագործումը, կարելի է միայն մանաթով գործարք իրականացնել, կրեդիտ քարտ նույնպես հնարավոր չէ երկրում օգտագործել, եթե երկրից դուրս արտարժույթով փոխանցումներ են կատարվում, ապա դրանք հարկվում են նոր եւ ծանր հարկերով: Սահմանափակումներ կան նաեւ ավանդներ ստանալու հետ կապված, ընդ որում դրանք եւս պետք է ստանալ միայն մանաթով:

Ա. Ջավադյանը, համեմատություն անցկացնելով Հայաստանի բանկային համակարգի հետ, նշում է մեզ մոտ առկա կայունությունը՝ այս պահին Հայաստանում խնդրահարույց բանկ չկա: Ցուցիչ է նաեւ այն, որ մեր եվրոպարտատոմսերի եկամտաբերության վրա էլ որեւէ կերպ չի անդրադարձել ապրիլյան լարումը, անգամ այս առումով վիճակը շտկվել է, ինչը չի կարելի ասել ադրբեջանական եվրոպարտատոմսերի մասին:

Ս.Խ.

# «Գառները՝ ողջ, գայլը կուշտ», սակայն մեզ պետք է ծեծված գայլ

⇨1

Անկախ այդ բոլորից, անկախ այն բանից, որ ապրիլյան պատերազմում հայ զինվորի արյամբ տրված կռվաններով հայկական կողմն առավել բարենպաստ կարգավիճակով էր Վիեննայում, անգամ միգուցե այդ հանդիպումը մեր զինվորի սխրանքի պարտադրանքի արդյունք էր, այնուհանդերձ՝ մենք պետք է իմանանք այն գինը, որ պահանջվում է հայերից բանակցությունների վերսկսման պարագայում:

ԵԱՀԿ գործող նախագահի, Գերմանիայի ԱԳ նախարար **Վալտեր Շթայնմայերն** անգամ վիեննական հանդիպումից հետո իր հայտարարության մեջ ֆիքսել է , որ շփման գծում իրադրությունը շարունակում է լարված մնալ, չնայած հունիսին բանակցությունների նոր փուլ սկսելու պատրաստակամություն են հայտնել և՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի նախագահները: Չգիտենք՝ ինչ «կրկնակի ու մշտական ջանքեր» պետք է գործադրեն համանախագահները, որ մինչեւ հիմա չգիտես ինչու չեն գործադրել փակուղուց դուրս գալու համար եւ թույլ են տվել, որ Ադրբեջանը հարձակվի ու փորձի ռազմական ճանապարհով խախտել ստատուս-քվոն:

Թե փուլ առ փուլ եւ հավանաբար փոխզիջմամբ (՞) ի՞նչ լուծում են որոնում ռուսները, եւ մինչեւ հունիսի վերջ էլ ի՞նչ կարող է կատարվել, միայն կիմանան նրանք, ովքեր եղել են Վիեննայի հանդիպմանը, իսկ այդ հանդիպմանն Արցախից ոչ ոք չի եղել, նրա կարծիքը չորսօրյա պատերազմից հետո անգամ համանախագահները չեն ուզել լսել՝ ենթարկվելով Ադրբեջանի շանտաժներին: Անկախ նրանից, որ Արցախից հնչել է հայտարարություն՝ Վիեննայի հանդիպումը ողջունելու մասին: Վիեննայում ներկա կողմերի ու մեծ խաղացողների ներկայացուցիչների՝ տարամետ շահերը ինչպե՞ս են արտացոլված լինելու Լավրովի ասած այդ «փուլ առ փուլում», չեն ասում նաեւ հայկական կողմից:

Մի ժամանակ ղարաբաղյան հարցի լուծման «փուլային տարբերակ» որակումը կարմիր լաթի ազդեցություն էր ունենում հայ քաղաքական շրջանակների վրա այն աստիճան, որ դա արտաբերողին դավաճան էին կոչում: Հիմա այդ «փուլ առ փուլն» ու ամերիկացիների ասած «համապարփակը» իրար համարժե՞ք են, հակադի՞ր, թե՞ մի երրորդ կարգի, ո՞վ կասի մեզ:

Ընդհանրապես՝ հետաքրքրական մի կառույց է Մինսկի խումբը, այն իր մեջ ընդգրկել է անընդգրկելին: Նրա անդամներից մեկը զենքի առեւտրով է փող աշխատում, մեկը տնտեսական այլ հետաքրքրություններ ունի, մեկն ուզում է բոլորին կռվեցնել՝ այդպես թաքցնել բուն նպատակը եւ այլն: Եւ այլնը հարակից նպատակներին է վերաբերում: Հիմա սրանք ո՞նց պիտի այնպիսի լուծում առաջարկեն, որ իրենց նպատակները շուլալեն հակամարտող կողմերի շահերին ու պայմաններին, մանավանդ՝ տարածաշրջանային եւ մեր սահմանների անվտանգությանը:

Բայց այս բոլորի մեջ մեզ ավելի շատ հայկական կողմի դիրքորոշումները պետք է հետաքրքրեն:

Թե ինչ է նշանակում ամեն մի ելքի պատրաստ լինելը, որի մասին ասում էր նախագահ **Սերժ Սարգսյանը** օդանավային իր հարցազրույցում, մի փոքր անհասկանալի է. ո՞վ՝ մե՞նք, Հայաստանը, Արցախը, Հայաստանի հանրությունը, Արցախի ժողովուրդը, ո՞վ: Կամ ինչպես ենք պատրաստ, եթե այդ ելքերի մասին ոչինչ չգիտենք, կամ շատ քիչ բան գիտենք: Որո՞նք են այդ ելքերը, պե՞տք է վերջապես մեկը մանրամասնի գոնե հունիսին վերսկսվելիք բանակցություններից առաջ: Հա, մի ելքը համարժեք պատասխանն է՝ եթե Ադրբեջանը համը հանի, դա ամեն մեկս գիտի, մյուսնե՞րը որոնք են: Պրոֆեսիոնալ հայրենասերների ոչինչ չասող մտավարժանքները տեղեկության աղբյուր չեն: Կամ՝ ի՞նչ բան է «համապարփակ լուծում» ասվածը դետալներով, որի մասին ԱՄՆ պաշտոնական ներկայացուցիչները, անգամ Հայաստանում ԱՄՆ դեսպանն են ասում: Եթե մեր նպատակը, Հայաստանի նախագահի խոսքով, ստատուս-քվոյի պահպանումը չէ, մոնիտորինգի ռեժիմի հաստատումն էլ կարճ նպատակ է, ապա ի՞նչ տարբերակ է մեզ սպասում, թող ասվի մեկընդմիշտ, իմանանք: «Մադրիդյան սկզբունքներ» ասում-ավարտում են, դետալների վերաբերյալ քննարկումների մանրամասները հանրությունից գաղտնի պահելով, կամ՝ խորհրդարանի կին խոսնակի միջոցով դրանք փորձարկելով (է, լավ, թողել եք, որ կնոջ վրա բոլորը հարձակվեն, հա՞): Սա էլ քաղաքական շախմատը չլինի, որի դեպքում մեծ հաշվով գաղտնապահության պատճառով շատ բան չկորցրինք՝ պիտի ունենայինք, որ կորցնեինք: Իսկ Արցախի հարցի վերաբերյալ գաղտնապահության բոլոր ժամկետներն ու պատճառներն ապրիլյան պատերազմից հետո ավարտվել են, զույգ պետությունների ճակատագրի հարցը բոլորիս է արդեն վերաբերում, դիվանագիտական հայացքն այստեղ քիչ է: Թվում է՝ հանրության ճիշտ կամ միգուցե ողջամիտ վերաբերմունքի կարիքն այս պահին իշխանության համար կարեւոր պետք է լիներ, բայց այն կարող է դրսեւորվել միայն լիարժեք տեղեկացվածության դեպքում: Հանրությանը, ու ոչ թե մի քանի հեռուստալրագրողի, դիմելու պահը հենց հիմա է մեր կարծիքով, ապրիլյան պատերազմից հետո եւ սպասվող միգուցե հանգուցային որոշումներց առաջ: Եթե մեզ լուծման «գառները՝ողջ, գայլը՝կուշտ» տարբերակն է առաջարկվելու, այսինքն՝ նախագահ Սարգսյանի ասած անվտանգության գոտու կամ տարածքների վերադարձով, իմանանք: Հասկանանք՝ մեզանից ինչ են ուզում, կարգավիճակի կամ երաշխավորված անվտանգության հարցը համապարփակ լուծման մե՞ջ են առաջարկում, թե՞ խաբում են՝ հետո: Եթե մեզ առաջարկում են «գառները՝ ողջ, գայլը՝ կուշտ» տարբերակը, ապա մեզ հարկավոր է լավ ծեծված գայլ այնուամենայնիվ:

Ճակատի ճեղքում թույլ չտալն ու հակառակորդի ծրագրերը խափանելն ընդունեցինք: Վառոդի հոտ չզգացածների՝ Բաքու հասնելու կոչերն էլ առանձնապես ոչ ոք լուրջ չի ընդունում, մեր զինված ուժերն էլ իրենց խնդիրը որ կատարել են՝ փառք ընկած տղաներին: Մինչդեռ ազատագրված տարածքներն անվտանգության գոտի, թեկուզ Արցախի նախագահի խոսնակ **Դավիթ Բաբայանի** երկրորդմամբ՝ չեզոք գոտի անվանելը ենթադրությունների տեղիք է տալիս, եւ ոչ միայն Երեւանի սրճարաններում նստած քարտեզ գծողների համար: Մանավանդ՝ ԱՄՆ պետքարտուղարության ներկայացուցիչ **Քըրբին** որոշ փակագծեր է բացել, թե նախագահները ստատուս-քվոյից դուրս գալու կամք են դրսեւորել, եկող ամիս էլ բանակցությունները վերսկսվելու են: Բա այսքանից հետո պարզ չլինի՞, թե հատկապես ստատուս-քվոյից դուրս գալու կամքն ինչո՞ւմ են ուզում դրսեւորված տեսնել՝տարածք հանձնելուն ոչ ոք չի համաձայնելու ախր, ապրիլյան նոր պատերազմից հետո մանավանդ: Այդ դեպքում ժողովրդին դիմելու պահն ուշանում է իսկապես: Մանավանդ՝ օդանավից ենք իմանում, որ 800 հա տարածք ենք կորցրել անվտանգության, թե չեզոք գոտուց, իրականում՝ ազատագրված տարածքներից, ու դրա վերաբերյալ իշխանամետ գործիչների՝ լայնությամբ, խորությամբ, թե երկարությամբ լրացուցիչ պարզաբանումներից փաստի էությունը չի փոխվում:

Իսկ գնահատական տալ՝ Վիեննայում սառույցը հալվեց. Հայաստանի դիվանագիտության հաղթանակ, ԵԱՀԿ քաղաքական վարկի խնդիր սեղանին եւ այլն, այս պահին ավելորդ է անգամ, քանի որ եթե Ադրբեջանը խախտի պայմանավորվածությունը, ապա նախագահ Սարգսյանի ասած նպատակը՝ հաջորդող քայլերի կամ բանակցությունների փակուղի-մտնել -չմտնելու առումով բան պարզելը, պերմանենտ հարկ կլինի օրակարգ վերադարձնել, անընդհատ ընդմիջելով շփման գծի նորանոր լարումներով: Մանավանդ, որքան էլ տարօրինակ, շփման գծում ապրիլի առաջին օրերին մենք կռվել ենք հենց ստատուս- քվոյի պահպանման համար, ու արյուն տվող զինվորն ի վերջո պետք է իմանա գինն իր տված արյան, այդ գինը պետք է համարժեք եւ ընդունելի լինի հայերիս համար: Ադրբեջանցիները հարձակվել են, քանի որ նրանց դուր չէր գալիս հաստատված ստատուս- քվոն: Իսկ 800 հա հողն անվտանգության գոտի , եւ ոչ թե ազատագրված տարածք, անվանելը ադրբեջանցիների ձեռքը տված կնիքով տեղեկանք է՝ Արցախի սահմանադրությամբ ֆիքսված, թեկուզ «ռազմավարական եւ մարտավարական նշանակություն չունեցող» աննշան տարածքները սեփականը համարելու համար:

AZG NEW SHABAT.QXD 19/05/2016 21:41 Page 8



# Նյուրեմբերգյան դատավարության փաստաթղթերում Հիտլերի

➪1

Այդպիսի հեղձուցիչ քաղաքական մթնոլորտում խեղդամահ էր արվում այն ամենը, ինչ կարող էր «վնասել» թուրք-խորհրդային «բարեկամական» հարաբերություններին, այդ թվում եւ Հայոց ցեղասպանության հիշատակմանը: Հայոց ցեղասպանությունը, իսկ ավելի լայն առումով ` Հայկական հարցը, դարձավ «Լենին-Քեմալ բարեկամության» զոհը:

Սակայն իրադրությունն արմատականորեն փոխվեց 1965թ. , երբ լրացավ Հայոց ցեղասպանության 50-ամյակը: Ապրիլի 24-ին տեղի ունեցավ համահայկական համազգային պոռթկում, երբ մայրաքաղաքում եւ հանրապետության բոլոր շրջաններում միլիոնավոր մարդիկ դուրս հորդեցին հրապարակները, փողոցները` «Հայոց ցեղասպանության ճանաչում», «Մեղավորների պատժում», « Հողերը, Հողերը», «Հատուցում» կարգախոսների ներքո: Դրանք երանելի պատմական օրեր էին եւ համահայկական երջանկության անմոռաց պահեր, որոնց քաղաքական ամենամեծ արդյունքը եղավ այն, որ Հայոց ցեղասպանության լռության սառույցը կոտրվեց եւ փշալարերը վերացան: Դրանից հետո Խորհրդային Միությունում այլեւս հնարավոր չէր կրկին արգելք դնել Հայոց ցեղասպանությունն անգամ հիշատակելու վրա:

1965թ. կայացած համահայկական բուռն ելույթներից հետո, երբ վերացվեց Հայոց ցեղասպանության վրա դրված արգելքը, Հայաստանում սկսվեց Հայոց ցեղասպանության համակողմանի ուսումնասիրությունը ակադեմիական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում, այդ թվում եւ ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտում, մասնավորապես նրա Թուրքիայի եւ Արաբական երկրների բաժինների գիտաշխատողների կողմից: Դրանց թվում էր նաեւ տողերիս հեղինակը:

## 2.ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՀԻՏԼԵՐՅԱՆ ԲԱՆԱՁԵՎՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ

1965թ. այդ եւ նրան հաջորդած օրերին լուրեր սկսեցին պտտվել, թե Հիտլերը ժամանակին անդրադարձել է Հայոց ցեղասպանությանը: Մարդիկ հետաքրքրվում էին. իրո՞ք այդպիսի բան կա, շատերը կասկածանքով էին վերաբերվում, մեծ էր թերահավատների թիվը, կային նաեւ այնպիսիները, որոնք չէին բացառում դրա հնարավորությունը: Դրությունը բարդանում էր նրանով, որ այդ լուրերի վերաբերյալ չէր նշվում որեւէ աղբյուր, եւ մարդիկ չգիտեին Հիտլերը դրական, թե՞ բացասական է արտահայտվել Հայոց ցեղասպանության մասին: Բայց քանի որ խոսքը ֆաշիստական առաջնորդի մասին էր, ապա մեծամասնությունը հակված էր ավելի շատ բացասականի կողմը: Շուտով հայտնվեցին առանձին հեղինակներ, որոնք հենվելով տարբեր օտար աղբյուրների վրա, տալիս էին կցկտուր, երբեմն իրարամերժ տեղեկություններ: Դա խոսում էր այն մասին, որ նրանք իրենց ձեռքի տակ չեն ունեցել վստահելի աղբյուր, չէին կարդացել բնագիր փաստաթուղթը: Հետագա պրպտումները, այնուամենայնիվ, որոշակի պարզություն մտցրեցին այդ հարցում, ըստ որի, Հիտլերը իր գեներալիտետի հետ հանդիպման ժամանակ իբրեւ թե հայտարարել է. «Ո՞վ է հիշում այսօր հայոց ցեղասպանության մասին» : Եվ հիտլերյան բանաձեւ -ասույթն այդկերպ կրկնվում է մինչեւ օրս:

Մենք ԱՄՆ մեր գիտական գործուղումների ընթացքում նույնպես փնտրում էինք գտնել գերմանական նացիստների ղեկավարի այդ հայտարարությունը հաստատող փաստաթուղթ- աղբյուրը, որը վերջ կտար տարընթերցումներին: Շահելով Ֆուլբրայթի մրցանակը, մենք 1993-1994թթ. աշխատում էինք Վաշինգտոնի Ջորջ Վաշինգտոնի համալսարանում, իսկ 1995թ. Մերիլենդի համալսարանում եւ հնարավորություն ունեցանք աշխատել ոչ միայն այդ համալսարանների գրադարաններում, այլեւ ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանում, ուսումնասիրելով արեւմտյան մեծ տերությունների քաղաքականությունն Արաբական Արեւելքում Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Ես սկսեցի տվյալ թեմայի վերաբերյալ սկզբնաղբյուրների ուսումնասիրությունից եւ գտա նաեւ այն , ինչ փնտրում էի, այսինքն, այն նյութերը, որոնք հաստատում էին Հիտլերի ասույթը կամ ձեւակերպումը հայերի ցեղասպանության վերաբերյալ:

Այդ աղբյուրը ամերիկյան հեղինակավոր «Նյու Յորք Թայմս» թերթում տպագրված վերին աստիճանի հետաքրքրական, նույնիսկ կարելի է ասել` եզակի տեղեկատվությունն է, որը չի սահմանափակվում լոկ հայերի ցեղասպանության խնդրով, այլեւ ընդգրկում է հարցերի մի լայն սպեկտր: Նշյալ խիստ կարեւոր նյութը տպագրվել է «Նյու Յորք Թայմսի» 1945թ. նոյեմբերի 24-ի համարում, որը նոյեմբերի 23-ին անթել հեռագրով հաղորդվել էր հատուկ «Նյու Յորրք Թայմսի» խմբագրությանը Գերմանիայի Նյուրեմբերգ քաղաքից, որտեղ ընթանում էր պատերազմի հանցագործ նացիստական ղեկավարների միջազգային դատավարությունը : Դատավարության ընթացքում ջրի երես դուրս եկան բազմաթիվ գաղտնի, մինչ այդ միջազգային հանրությանն անհայտ փաստաթղթեր, այդ թվում Լեհաստանի վրա Գերմանիայի հարձակման նախօրեին` 1939թ. օգոստոսի 22-ին, Օբերզալցբուրգում տեղի ունեցած խորհրդակցության արձանագրությունները: «Նյու Յորք Թայմսի» խմբագրության հակիրճ ծանուցումը հայտնում էր. «Ստորեւ տրվում են հատվածներ փաստաթղթերից, բարձրագույն հրամանատարության հետ Հիտլերի ունեցած զրույցից»: Դա երկրորդ զրույցն էր, որ տեղի էր ունեցել 1939թ. օգոստոսի 22-ին, Օբերզալցբուրգում, եւ վերաբերում էր Լեհաստանին, որին ներկա են եղել ռեյխսմարշալ Գյորինգը, որն այդ ժամանակ համարվում էր Հիտլերից հետո ֆաշիստական Գերմանիայի երկրորդ դեմքը, գերմանական բանակի գլխավոր շտաբի պետ, ֆելդմարշալ Կեյտելը, գեներալ գնդապետ Բրաուխիչը եւ գերմանական բանակի մյուս բարձրագույն հրամանատարները: Դիմելով նրանց, Հիտլերն ասում է. «Հաղթողին հետագայում չեն հարցնի, արդյոք մենք ճշմարտությունն ենք ասել, թե՛ ոչ: Պատերազմը սկսելիս եւ իրագործելիս խնդիրը ոչ թե իրավունքն է, այլ հաղթանակը: Խղճմտանք չունենաք: Եղեք դաժան: Իրավունքն ուժեղինն է: Ես Արեւելք եմ ուղարկել իմ «Մահվան գանգեր զորամիավորումները», հրամայելով սպանել առանց խղճմտանքի եւ գթության լեհական ռասային եւ լեզվին պատկանող բոլոր տղամարդկանց , կանանց եւ երեխաներին: Միայն այս կերպ մենք կնվաճենք կենսատարածք, որի կարիքը մենք ունենք»: Եվ Հիտլերը բարձրագույն հրամանատարության հետ իր զրույց-հրահանգի այս հատվածն ավարտում է` «Ո՞վ է այժմ դեռեւս **խոսում** հայերի ոչնչացման մասին» («Who still talk nowadays of the extermination of the Armenians?») պաթետիկ հարցումով:

Հետագայում, բազմաթիվ հետազոտողներ, հավանաբար իրենց ձեռքի տակ չունենալով փաստաթղթի բնագիրը, աղավաղելով կամ անտեղի ուղղումներ մտցնելով Հիտլերի վերոնշյալ հարցման մեջ, այն ներկայացնում են «Ո՞վ է **հիշում** այսօր հայոց ցեղասպանության մասին» ձեւակերպմամբ: Խոսքը վերաբերում է ոչ միայն հայ, այլեւ օտարերկրյա մասնագետներին: Բազմաթիվ օրինակներից, ընթերցողի համբերությունը չչարաշահելու համար, բերենք երկուսը:

2002 թ. համաշխարհային մամուլի էջերում տպագրվեց հաղորդում այն մասին, որ «Նյույորքցի պատմաբան եւ քաղաքական վերլուծաբան , դոկտոր Ռոբերտ Ջոնը գտել է Ադոլֆ Հիտլերի «Ո՞վ է հիշում այսօր հայերի ցեղասպանության մասին » արտահայտության փաստաթղթային հաստատումը»: (Տես` «Голос Армении:, 24 января 2002): Նրանում կա հիշատակում այն մասին, որ Հիտլերն իր այդ հարցադրումն արել է 1939թ. օգոստոսի 22-ին Օբերզալցբուրգում իր գեներալների հետ տեղի ունեցած համաժողովում:

2016 ապրիլի 23-ին Երեւանում կայացավ «Ընդդեմ Ցեղասպանության ոճրագործության. Ցեղասպանության կենդանի վկաները «Գլոբալ Ֆորումը», որին մասնակցում էին եւ ելույթ ունեցան հայտնի մասնագետներ` ցեղասպանագետներ, պատմաբաններ, վերլուծաբաններ, դիվանագետներ, արվեստաբաններ, հասարակական գործիչներ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից, Իտալիայից, Բելգիայից, Ավստրիայից, Նիդերլանդներից, Շվեդիայից , Իրաքից, Լիբանանից, Եգիպտոսից, Դարֆուրից, Ռուանդայից, Կամբոջայից, Վիետնամից եւ այլ երկրներից: Այդ ֆորումին մասնակցում էինք նաեւ մենք: Վերոնշյալ երկրների բոլոր պատվիրակներն իրենց զեկուցումներում եւ ելույթներում անխտիր անդրադառնում էին նաեւ Հայոց ցեղասպանությանը եւ վկայակոչում ` Հիտլերի բանաձեւը, սակայն նրա` «Ո՞վ է **հիշում** այսօր հայերի ցեղասպանության մասին» աղավաղված տարբերակով:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ո՞րն է հարցի էությունը:

Առաջին, խնդիրն այն է, որ անկախ այն բանից , թե ինչ հարց է քննարկվում, առաջնայինը նրա ճշմարիտ լինելու պարագան է: Երբ այս տեսանկյունից ենք մոտենում, ապա Ադոլֆ Հիտլերը 1939թ. ոչ մի դեպքում չէր կարող ասել «Ո՞վ է հիշում այսօր հայերի **ցեղասպանության** մասին», քանի որ այդ ժամանակ «ցեղասպանություն»` «գենոցիդ» տերմինը դեռ հայտնագործված չէր: Ռաֆայել Լեմկինն այդ տերմինը հայտնագործել է 1944 թվականին, որը Միավորված ազգերի կազմակերպության կողմից պաշտոնապես ընդունվել եւ շրջանառության մեջ է դրվել 1948թ. երբ արդեն Հիտլերը կենդանի չէր: Ճշմարտությունն այն է, որ Հիտլերն օգտագործել է «ոչնչացում», «լիկվիդացում»` «extermination տերմինը, ինչպես արձանագրված է Նյուրեմբերգյան դատավարության ժամանակ հայտնաբերված փաստաթղթում` «Ո՞վ է այժմ դեռեւս **խոսում** հայերի **ոչնչացման** մասին»: Հիտլերի արտահայտությունը, հանուն ճշմարտության, հենց այդպես էլ պետք է ընդունել որպես հիմք: Դա է հաստատում նաեւ գերմաներեն բնագիրը` «Wer redet heute noch von Vernichtung der Armenier?»:

Երկրորդ, սկզբունքային բնույթի շեղում է եղել, երբ «Ո՞վ է այժմ դեռեւս **խոսում** հայերի ոչնչացման մասին» հիտլերյան բանաձեւը փոխարինվել է «Ո՞վ է **հիշում** այսօր հայերի ցեղասպանության մասին» բառակապակցությամբ, որն իմաստային առումով կոպիտ սխալ է: Հարկ է նշել, որ «խոսելը» եւ «հիշելը» հոմանիշներ չեն եւ չեն կարող մեկը մյուսին փոխարինել որպես համարժեքներ: Նրանց փոխարինումը մեկը մյուսով անխուսափելիորեն, հատկապես տվյալ դեպքում, առաջ է բերում իմաստային փոփոխություն: Հիտլերը, անշուշտ, դա հասկացել է եւ մտածված կերպով օգտագործել է «Ո՞վ է խոսում» բառակապակցությունը: Նա, չէր կարող ասել, թե ոչ ոք չի հիշում հայերի ոչնչացումը, շատ լավ իմանալով, որ կան ոչ միայն մարդիկ, այլեւ ազգեր, որ հիշում են, եւ մենք լիուլի կիսում ենք այդ տեսակետը: Դա հիշում էին հայերի ոչնչացումն իրագործած թուրքական դահիճները, ոչնչացման գծով նրանց հանցագործ դաշնակից քրդերը եւ չերքեզները, Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական դաշնակիցներ Գերմանիայի եւ Ավստրո-Հունգարիայի կայսրության բնակչությունը եւ այլք: Դա հիշում են զոհերը, նախ եւ առաջ հրաշքով փրկված հայերը, հայերի հետ ոչնչացման ենթարկված քրիստոնյա ասորիները, հույները, դժնդակ այդ օրերին հայերին օգնության ձեռք մեկնած արաբները եւ այդ ողբերգության ականատես վկաներ` ռուսները, հրեաներն ու վրացիները, ամերիկյան միսիոներները եւ շատ ու շատ ուրիշներ: Ուստի ասել, թե «ո՞վ է հիշում», անտրամաբանական է, եթե ոչ անհեթեթ: Հիտլերը դա լավ է հասկացել, ուստի նա հեռու եղել հայերի ոչնչացումն չհիշելու մտքից եւ նախապատվությունը տվել է հայերի **ոչնչացման մասին չխոսելուն**: Ուստի պետք է հրաժարվել «Ո՞վ է հիշում այսօր հայերի ցեղասպանության մասին» Հիտլերին վերագրվող տարբերակից, որի հեղինակը հայտնի չէ, թե ով է , եւ ընդունել «Ո՞վ է այժմ դեռեւս **խոսում** հայերի **ոչնչացման** մասին» ձեւակերպումը, որի հեղինակը իրոք Ադոլֆ Հիտլերն է:

Երրորդ, դրա հետ կապված անհրաժեշտ է մեկ հարցում եւս ճշգրտում մտցնել: Երկար ժամանակ Հայոց ցեղասպանության վերաբերյալ տարածված է եղել եւ լայնորեն օգտագործվել է « Մի մոռացված ցեղասպանություն» արտահայտությունը, որը մեր օրերում եւս երբեմն-երբեմն հանդիպում է: Դա բխում էր «Ո՞վ է հիշում» արտահայտությունից եւ հնարավոր էր «հիշել-չհիշել» տարբերակի դեպքում, երբ հիշելու հակառակը մոռանալն է: Այժմ, մերժելով «հիշեցման» տարբերակը, հիմնազուրկ է դառնում նաեւ « Մի մոռացված ցեղասպանություն» արտահայտությունը, որի տեղը օրինականորեն պետք է գրավի «Լռության մատնված ցեղասպանություն» բառակապակցությունը: 1965թ. ապրիլին ոտքի ելած միլիոնավոր հայկազունների ճնշման տակ փշրվեց հենց լռության պատնեշը եւ դրանից հետո սկսեցին արդեն բարձրաձայն խոսել ցեղասպանության, այն կատարող դահիճների եւ հատուցման մասին, իսկ դրան հաջորդած 50 տարին, մինչեւ մեր օրերը, անկասելիորեն շարունակվում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հաղթարշավը:

Չորրորդ, երբ Հիտլերը Օբերզալցբուրգում ունեցած ելույթում, նախքան Լեհաստան ներխուժելը, կոչ էր անում « Խղճմտանք չունենաք: Եղեք դաժան: Իրավունքը պատկանում է ուժեղին» եւ տեղյակ պահում , որ ինքը «Հրամայել է սպանել առանց խղճի եւ գթության լեհական ռասային պատկանող բոլոր տղամարդկանց, կանանց եւ երեխաներին», ու ելույթն ավարտում է«Ո՞վ է այժմ դեռեւս խոսում հայերի ոչնչացման մասին» հարցադրումով, ապա դա ոչ միայն հրաման եւ կոչ էր լեհերին սպանելու եւ դրա մեթոդների վերաբերյալ, ապա հիշատակում առ այն, թե ինչպես են թուրքերը հայերին ոչնչացրել 1915թ.: Դրանով իսկ Հիտլերը, կամա, թե ակամա, տվել է երիտթուրքական դահիճների գնահատականը, եւ հաստատում, որ թուրքական իշխանությունները հայերի ոչնչացումը կամ արդի եզրաբանությամբ` ցեղասպանությունը, իրականացրել են դաժանորեն, առանց խղճմտանքի ու գթության, չխնայելով ո՛չ տղամարդկանց, ո՛չ կանանց եւ ո՛չ էլ երեխաներին: Դա միաժամանակ մահացու հարված է Հայոց ցեղասպանության հարցում թուրքական ժխտողականությանը:

AZG NEW SHABAT.QXD 19/05/2016 21:41 Page 9



# Հայոց ցեղասպանության բանաձեւի եւ հարակից այլ հարցերի մասին

Հինգերորդ, վերոշարադրյալը գալիս է հաստատելու, որ Հիտլերը լավատեղյակ է եղել հայերին ոչնչացնելու երիտթուրքական ոճրագործության մանրամասներին ու մեթոդոլոգիային եւ ընդօրինակել է թուրք դահիճներին: Նյուրեմբերգյան փաստաթուղթը, Օբերզալցբուրգում Հիտլերի արտահայտած մտքերն ու տված ձեւակերպումները գալիս են անհերքելիորեն ապացուցելու այն տեսակետը, որ Հայոց ցեղասպանությունն իրագործած երիտթուրքական դահիճները իրոք եղել են գերմանական նացիստների ուսուցիչները, իսկ գերմանական նացիստները՝ թուրքական դահիճների ընդունակ աշակերտները ազգերին ամբողջապես ոչնչացնելու հարցում:

Կարծում ենք , որ տեղին է վերոնշյալ հարցերին անդրադառնալը եւ համապատասխան ճշգրտումներ ու հստակություններ մտցնելը այժմ, երբ համայն հայությունը տարբեր երկրների մեր համակիրները, նշում են Հայոց ցեղասպանության հարյուրամյակը:

Հանրահայտ ճշմարտություն է, որ ազգի ինքնությունը եւ գոյությունը, նրա պապենական հայրենիքն ու տարածքը զենքի ուժով են պահպանվում: Հայերն այդ հարցում արդեն անհրաժեշտ դասեր են քաղել, որի վկայությունը Ղարաբաղյան հակամարտությունն է, նրա թե՛ առաջին եւ թե՛ մերօրյա երկրորդ փուլը: Եվ այսօր, 1965թ., Հայոց ցեղասպանության լռության պատնեշը խորտակած հայկազունների խրամատներում գտնվող ժառանգորդ կորյունները, իրենց ձեռքն են վերցրել հայության գոյության ու անվտանգության պահպանման ու ապահովման պատմական առաքելությունը, ջախջախիչ հարվածներ տալով եւ մեր տարածքներից վռնդելով 1915-1920 թթ. թուրք-ազերիական մարդակեր բարբարոսների մերօրյա ժառանգորդ վանդալներին:

## 3. ՀԻՏԼԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱՆ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՅՐԵՐԻՆ ՆՐԱ ՏՐՎԱԾ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Ինչպես նշվեց, Նյուրեմբերգյան դատավարության ընթացքում հայտնաբերված գերմանական գաղտնի փաստաթղթերը, որոնք վերաբերում էին Օբերզալցբուրգում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ Հիտլերի ելույթին եւ նրա արտահայտած տեսակետներին, արժեքավոր տեղեկություններ են պարունակում ոչ միայն Հայոց ցեղասպանության վերաբերյալ, այլեւ ընդգրկում են հարցերի ավելի լայն սպեկտր: Մասնավորապես, դրանք շոշափում են այնպիսի հիմնախնդիրներ, ինչպես Երկրորդ համաշխարհային պատերազմին նախորդած ժամանակաշրջանի միջազգային իրադրությունը, պետությունների փոխհարաբերությունները, պետական գործիչների բնութագրումը, նրանց դերակատարումը դիվանագիտության եւ միջազգային հարաբերությունների բնագավառում, Հիտլերի ռազմաքաղաքական ապագա ծրագրերը եւ այլն: Դրանք շատ կարեւոր փաստաթղթեր են, որոնց զգալի մասը ծանոթ չէ ոչ միայն լայն հասարակությանը, այլեւ մասնագետներին: Նկատի ունենալով այդ պարագան, ստորեւ հակիրճ կանդրադառնանք այդ հարցերին, հիմք ընդունելով «Նյու Յորք Թայմս»-ում լույս ընծայված Նյուրեմբերգյան փաստաթղթերը :

Դրանց անդրադառնալը պայմանավորված է նաեւ նրանով, որ այդ փաստաթղթերն ուղղակիորեն առնչվում են Երկրորդ համաշխարհային պատերազմի հետ, պատերազմ, որի ավարտման 71-ամյակը համաշխարհային մասշտաբով նշվեց օրերս, այդ թվում եւ Հայաստանում:

Հիտլերը 1939թ. օգոստոսի 22-ին Օբերզալցբուրգում կայացած երկրորդ հանդիպման ժամանակ, անդրադառնալով Եվրոպայում ստեղծված իրադրությանը, իր գեներալներին տեղեկացնում է. «Ես որոշել եմ գնալ Ստալինի հետ: Ամբողջ աշխարհում կան երեք մեծ պետական գործիչներ՝ Ստալինը, ես եւ Մուսոլինին (Իտալիայի առաջնորդը-Ն.Հ )»: Այնուհետեւ նա բացատրում է, թե ինչու է նա գնալու Ստալինի հետ: Ահա այդ բացատրությունը. «Ստալինը եւ ես միակն ենք , որ տեսնում ենք ապագան: Ուստի ես մի քանի շաբաթից Ստալինի հետ ձեռք կսեղմենք գերմանա-ռուսական սահմանի վրա եւ նրա հետ կձեռնարկենք աշխարհի նոր վերաբաժանումը»: Հիտլերի այդ միտքը շատ կարեւոր է Գերմանիա - Խորհրդային Միություն եւ միջազգային հարաբերությունների հետագա զարգացումներն ըմբռնելու տեսակետից: Եվ, իրոք, Գերմանիան ու Խորհրդային Միությունը արդեն 1939թ. սեպտեմբերին Եվրոպայից սկսեցին աշխարհի վերաբաժանումը: Հիտլերը իր գեներալներին բացատրում է, թե ինչումն է կայանում Գերմանիայի, գերմանական բանակի ուժը. «Մեր ուժը մեր արագության եւ դաժանության մեջ է»: Եվ որպեսզի հասկանալի լինի , թե ինչ նշանակություն ունի դա, Հիտլերը հիշատակում է Չինգիզ խանին, նշելով, որը «նա միլիոնավոր կանանց եւ երեխաների է սպանել իր սեփական կամքով եւ ուրախ սրտով: Պատմությունը միայն նրան է տեսնում որպես պետական մեծ շինարար»: Դժվար չէ նկատել Հիտլերի համակրանքը Չինգիզ խանի նկատմամբ եւ նրա այդ տեսակետի աղերսները «Ո՞վ է այժմ դեռեւս խոսում հայերի ոչնչացման մասին» նրա արտահայտության հետ: Ըստ էության Հիտլերը ազգակցական կապ է տեսնում օսմանյան կառավարողների եւ Չինգիզ խանի միջեւ: Նրանց միավորողը դաժանությունը եւ միլիոնավոր մարդկանց սպանելն է, ինչը նրանց համար եղել է մասնագիտություն:

Այդ նույն հանդիպման ժամանակ Հիտլերը հայտարարում է. « Իմ մասին թե ինչ է մտածում արեւմտյան եվրոպական թույլ քաղաքակրթությունը, դա ինձ չի հետաքրքրում»: Բացելով իր քարտերը, Հիտլերը հայտնում է հանդիպմանը ներկա գեներալներին, որ գեներալ- գնդապետ Բրաուխիչը խոստացել է իրեն պատերազմը Լեհաստանի հետ ավարտել երկու շաբաթում, եւ ֆյուրերը վստահեցնում է իր գեներալներին , որ Անգլիան ու Ֆրանսիան ռիսկ չեն անի հարձակվել Գերմանիայի վրա: Ըստ որում նա դա անում է շատ վիրավորական ձեւով, ստորացնելով այդ երկու երկրների ղեկավարներին: Ահա նրա ելույթի այդ հատվածն ամբողջությամբ. «Ես տեսել եմ այդ թշվառ որդերին, Դալադիեին (Ֆրանսիայի վարչապետը-Ն.Հ.) եւ Չեմբերլենին (Մեծ Բրիտանիայի վարչապետը-Ն.Հ.) Մյունխենում եւ Լեհաստանում: Նրանք շատ վախկոտ են, որպեսզի հարձակվեն»: Այստեղ Հիտլերը հիշատակելով իրենց հանդիպումը Մյունխենում, նկատի ունի 1938թ. սեպտեմբերի 30-ի Մյունխենյան գործարքը, որի ժամանակ Անգլիան եւ Ֆրանսիան, տմարդիորեն եւ վախկոտաբար Գերմանիային զիջեցին Չեխոսլովակիայի Սուդեթական մարզը, իսկ վերջինս՝ Գերմանիան, շատ չանցած գրավեց ողջ Չեխոսլովակիան:

Ընդհանրապես Հիտլերն իր արտաքին քաղաքականության մեջ մեծ ուշադրություն էր դարձնում, թե ում հետ գործ ունի, սկզբունքային, թե՞ վախկոտ ու զիջող մեկի հետ:

Խոսելով Բրաուխիչի խոստման մասին՝ պատերազմը Լեհաստանի հետ երկու շաբաթվա ընթացքում ավարտելու վերաբերյալ, Հիտլերն զրույցում մի նոր հանգամանք է մտցնում՝ անդրադառնում է գերմանա-լեհական պակտին եւ նշում. «Իմ պակտը Լեհաստանի հետ միայն նշանակում էր մոլորեցնել, խաբել նրան տվյալ ժամանակ»: Դիվանագիտական պրակտիկայում հազվադեպ է նման խոստովանություն հանդիպում: Բայց հարցը միայն դա չէ: Հիտլերը դիմելով հանդիպման մասնակիցներին, ասում է. «Ջենտլմեններ, Ռուսաստանի հետ պատահելու է հենց նույնը, ինչ որ ես իրագործել եմ Լեհաստանի հետ: Ստալինի մահից հետո, նա լուրջ հիվանդ է, մենք կջախջախենք Խորհրդային Միությանը»: Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ Խորհրդային Միության վրա հարձակում Հիտլերը ծրագրել էր դեռեւս 1939թ., որի մասին նա իր մտերիմների շրջանում բացահայտորեն ասում է օգոստոսի 22-ի հանդիպման ժամանակ , իսկ հաջորդ օրը՝ օգոստոսի 23-ին, նրա արտաքին գործերի նախարար Ռիբենտրոպը Մոսկվայում Խորհրդային Միության արտաքին գործերի նախարար Մոլոտովի հետ ստորագրում են գերմանա-խորհրդային չհարձակման պակտը: Հիտլերի այդ քայլերը նպատակաուղղված էին մոլորեցնել, կարելի է ասել խաբել Խորհրդային Միությանը, բթացնել նրա ղեկավարության զգոնությունը եւ հանկարծակիի բերել նրան, ինչը մասամբ հաջողվեց Հիտլերին: Այսպիսով, հակառակորդին խաբելը, մոլորեցնելը եւ շանտաժի ենթարկելը եղել է Հիտլերի եւ նրա թիմի արտաքին քաղաքականության կարեւոր բաղադրիչներից:

Օբերզալցբուրգյան հանդիպման ժամանակ քննարկվել է նաեւ եվրոպական փոքր երկրների եւ նրանց նկատմամբ Գերմանիայի քաղաքականության հարցերը: Հիտլերը դրսեւորում է իրեն հատուկ արհամարհական վերաբերմունք այդ երկրների ու նրանց ղեկավարների նկատմամբ, այդ թվում եւ Թուրքիայի, եւ հայտնում իր զինվորական էլիտային. «Փոքր երկրները չեն վախեցնում ինձ : Քեմալի մահից հետո Թուրքիան կառավարելու են տկարամիտները եւ կիսաապուշները: Ռումինիայի թագավորն ամբողջապես կոռումպացված է եւ դարձել է իր սեքսուալ ցանկությունների ստրուկը: Բելգիայի թագավորը եւ հյուսիսային թագավորները (նկատի ունի հարեւան Շվեդիան, Նորվեգիան, Դանիան-Ն.Հ.) թույլ տիկնիկներ են: Ճապոնիայի կայսրը վերջին ռուսական ցարի կտորն է՝ թույլ, վախկոտ, անվճռական» եւ այլն: Դժվար չէ նկատել, որ Հիտլերն ըստ էության օտարերկրյա պետական գործիչների վերաբերյալ դոսյե կազմել եւ փորձել է օգտագործել նրանց թուլությունները իր քաղաքականության մեջ:

Հիտլերը Գերմանիայի հարեւան երկրներին, նրանց ղեկավարներին եւ ժողովուրդներին ոչնչացնող գնահատականներ տալուց հետո, դիմում է հանդիպման մասնակիցներին հետեւյալ առաջարկությամբ. «Եկեք մտածենք մեր մասին՝ որպես տերերի, եւ այս ժողովուրդներին համարենք լավագույն դեպքում լաքած կիսակապիկներ, որոնք մտրակի կարիք են զգում»:

Ամենն ինչ ասված է այնպիսի ցինիկությամբ ու արհամարհանքով, որ այլեւս ավելորդ մեկնաբանության կարիք չկա:

Վերջում, Հիտլերը ներկաներին ասում է.«Ես միայն մի վախ ունեմ, դա այն է, որ Չեմբերլենը կամ նրա նման մեկ այլ կեղտոտ խոզ, կգա ինձ մոտ միտքս փոխելու առաջարկությամբ: Նա կշպրտվի ներքեւ, նույնիսկ եթե ես անձամբ ստիպված լինեմ ոտքով հարվածեմ նրա փորին՝ լուսանկարիչների աչքերի առջեւ: Ո՛չ, դրա համար (այսինքն մտափոխության- Ն.Հ.) արդեն ուշ է: Ներխուժումը եւ Լեհաստանի ոչնչացումը կսկսվի շաբաթ առավոտյան: Փառք ու պատիվ ձեզ, ջենտլմեններ: Վարշավայում մենք կրկին կտոնենք մեր հանդիպումը»:

Նյուրեմբերգյան փաստաթղթում արձանագրված է, որ Հիտլերի ելույթը լսվել է մեծ խանդավառությամբ, «իսկ Գյորինգը ցատկում է սեղանի վրա եւ պարում ինչպես վայրենի»: Միաժամանակ փաստաթղթում արձանագրված է, որ «Փոքրաքանակ կասկածողները լուռ մնացին»: Թեեւ դրանց անունները չեն նշված, այնուհանդերձ, գեներալական էլիտայի մեջ եղել են այդպիսիները:

## 4. ՀԻՏԼԵՐԻ ՎԵՐՋԻՆ ԱՄՈՒԼԻՍԸ

Պաշարված Բեռլինի իր բունկերում վերջին օրերը ապրող ֆյուրերը՝ Ադոլֆ Հիտլերը, հանկարծ ցանկություն է հայտնում հանդիպել եւ զրույց ունենալ որեւէ չեզոք երկրի լրագրողի հետ: Դա հաձնարարվում է կազմակերպել Մարտին Բորմանին, Հիտլերին նվիրված նրա զինակցին, որը երկար ժամանակ գլխավորել է նացիստական կուսակցությունը: Նրան հաջողվում է կազմակերպել Հիտլերի հանդիպումը շվեյցարացի լրագրող Կուրտ Շպեյդելի հետ, ֆյուրերի բունկերում, 1945թ. ապրիլի 29, Հիտլերի ինքնասպանությունից մեկ օր առաջ:

Այդ հարցազրույցը պարունակում է որոշ հետաքրքրական պահեր, որոնք համարյա հայտնի չեն հանրությանը: Այսպես, օրինակ, ի պատասխան լրագրողի հարցին ՝ «27 տարի առաջ քաղաքական պայքարի մեջ մտնելով, Դուք ենթադրո՞ւմ էիք, որ Ձեզ այսպիսի ավարտ է սպասում», Հիտլերը պատասխանում է. «Այո, արդեն այն ժամանակ մենք շատ լավ հասկանում էինք, թե ինչի ենք գնում»: Այնուամենայնիվ Հիտլերը գտնում է, որ «իրենք չեն պարտվել. Գերմանիան՝ այո, տանուլ է տվել պատերազմը, վերմախտը պարտություն է կրել: Բայց մենք խթանեցինք հզորագույն գաղափարը:Նացիոնալ-սոցիալիզմն ապացուցեց իր բացարձակ առավելությունը: Նացիոնալ-սոցիալիզմին է պատկանում ապագան, ես չեմ վախենում ասել, որ դա կլինի XXI դարը»: Շատ հետաքրքրական է Կուրտ Շպեյդելի Հիտլերին տրված վերջին հարցը. «Պե՞տք էր այդ պատերազմը»: Հիտլերը պատասխանում է.« Դուք այնպես եք խոսում, կարծես թե ամբողջ աշխարհում միայն ինձնից էր կախված սկսել, թե ոչ այս պատերազմը: Անգլիացիները, ամերիկացիները եւ աշխարհի բոլոր հրեաներն արեցին ամեն ինչ, որպեսզի սկսվի այս պատերազմը: Միայն ապուշը կարող է մտածել, որ այդ պատերազմը մեր ստրատեգների մտահղացումն է (http//www.meganovosti.net/news»):

Հիտլերը փաստորեն հաստատում է անգլիացիների, ամերիկացիների եւ հրեաների պատասխանատվությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի ծագման մեջ, եւ նա այդ հարցում իհարկէ , իրավացի է:

Ամփոփելով, կարելի է ասել, որ Նյուրեմբերգյան դատավարության ժամանակ ի հայտ եկած գերմանական արժեքավոր եւ եզակի փաստաթղթերը նոր լույս են սփռում Երկրորդ համաշխարհային պատերազմի նախապատրաստման եւ ընթացքի վրա , հարստացնում մեր գիտելիքները պատմական այդ կարեւոր շրջանի վերաբերյալ:

Այդ փաստաթղթերի շնորհիվ հնարավոր դարձավ ճշգրտումներ եւ հստակեցումներ մտցնել Հայոց ցեղասպանության որոշ հարցերի լուսաբանման եւ գնահատման մեջ: Հնարավոր եղավ նաեւ շրջանառության մեջ դնել Հիտլերի արտահայտած կարծիքը Հայոց ցեղասպանությունն իրականացրած թուրքական դահիճների մեթոդոլոգիայի վերաբերյալ , ինչպես նաեւ հետքեմալական շրջանի թուրքական պետական գործիչներին տրված նրա ստորացուցիչ գնահատականները:

Վստահաբար կարելի է ասել, որ Նյուրեմբերգյան փաստաղթերում դեռեւս կան բազմաթիվ արժեքավոր նյութեր, որոնք սպասում են իրենց հետազոտողին:

AZG NEW SHABAT.QXD 19/05/2016 21:41 Page 10



# Մահմեդական աշխարհը իսլամիստներից առաջ եւ այսօր




Նապոլեոն Բոնապարտի 1798 թ. եգիպտական արշավանքից հետո՝ 19-րդ դարի սկզբներին, Եգիպտոսի փոխարքա Մուհամմադ Ալին (1769-1849) փորձում է կառուցել արդիական պետություն, ներշնչվելով Մաքիավելիի «Տիրակալից», որը հանդես է գալիս քաղաքականության եւ աստվածայինի տարանջատման օգտին: 1923 թվականին Կահիրեի կայարանում ֆեմինիստական շարժման ակտիվիստուհի Հոդա Շարաուին հրապարակայնորեն հանում է իր գլխաշորը: Դա առաջին դեպքն է արաբական աշխարհում: 1956 թվականին Եգիպտոսի նախագահ Գամալ Աբդել Նասերը կանանց շնորհում է ընտրություններին մասնակցելու իրավունք:

1923 թվականի հոկտեմբերին Մուստաֆա Քեմալը հռչակում է Թուրքիայի Հանրապետության ծնունդը: Ամիսներ անց ընդունված սահմանադրության մեջ նշվում էր, որ «թուրքական պետության կրոնը իսլամն է»: Սակայն խալիֆաթը, կրոնական կրթությունը եւ շարիաթի դատարանները վերացվում էին, դատական համակարգը վերակազմակերպվում է ըստ ֆրանսիական մոդելի: Թուրքական սահմանադրության մեջ իսլամը վկայակոչող 2-րդ հոդվածը 1928 թ. փոխարինվում է «ազգայնականություն, առաջանցիկություն, ամբոխավարություն, պետական տնտեսավարում եւ հանրապետականություն» հասկացություններով: 1937 թ. նոյեմբերին սահմանադրության նույն՝ 2-րդ հոդվածը հաստատում է պետության աշխարհիկ (լայիկ) բնույթը:

Իրանի միապետ Ռզա Շահը պաշտոնապես արգելում է չադրա կրելը եւ 1936 թ. գյուղեր է գործուղում ժանդարմների՝ հանելու կանանց չադրաները:

Թունիսի նախագահ Հաբիբ Բուրգիբան 1956 թ. հրապարակավ հանում է մի կնոջ գլխաշորը: 1957 թ. նա ընդունում է Անձնական կարգավիճակի օրենսգիրք:

Յասեր Արաֆաթը 1969 թ. փետրվարին Պաղեստինի ազատագրման կազմակերպության նախագահ ընտրվելուց հետո կարողանում է պաղեստինցի քրիստոնյաներին, համայնավարներին, մի շարք այլ կուսակցություններ ու շարժումներ միավորել ընդհանուր ծրագրի շուրջը, որտեղ իսլամը չի հիշատակվում, բայց խոսվում է տարածքային մտահոգությունների մասին:

2014 թ. արդեն հետհեղափոխական Թունիսում ընդունվում է նոր սահմանադրություն, որի 1-ին հոդվածը հռչակում է. «Թունիսը ազատ, անկախ եւ ինքնիշխան պետություն է: Կրոնը՝ իսլամ, լեզուն՝ արաբերեն, վարչակարգը՝ հանրապետություն»: Սալաֆիստների պահանջած «շարիաթ» բառը բացակայում է: Խոսվում է խղճի եւ հավատքի ազատության, սեռերի իրավահավասարության մասին:

Ֆրանսիացի հայտնի պատմաբան Անրի Լորանը իսլամի եւ աշխարհիկության համատեղելիության հնարավորության հարցի վերաբերյալ Le Point շաբաթահանդեսին տված ծավալուն հարցազրույցում ընդգծում է, որ աշխարհիկությունը տարբեր միջավայրերում տարբեր կերպ է ընկալվում: Օրինակ, Ֆրանսիայում դա նշանակում է կրոնների իրավահավասարություն՝ զուգորդված իշխանության եւ հանրության չեզոքության հետ: ԱՄՆ-ում դա կանոնակարգվում է սահմանադրության 1-ին ուղղման միջոցով. բոլոր կրոնները արտոնված են: Թեեւ նախագահը երդում է տալիս ձեռքն Աստվածաշնչին դրած, քաղաքականության եւ կրոնի միջեւ անջրպետ կա: Պետությունն իրավունք չունի ֆինանսավորելու որեւէ մասնավոր կրոնական դպրոց:

Մահմեդական երկրներում նման բան չկա: Միայն Ինդոնեզիան է պաշտոնապես հարգում բոլոր կրոնները, նշում է Լորանը: Դասական իսլամի համաձայն, երկրի իշխանությունը պետք է հարգել տա իսլամը: Ըստ արեւելյան ավանդույթի, «իսլամը աշխարհիկ աստվածապետություն է»: Մարոկկոյի թագավորը խալիֆ է, այսինքն՝ նաեւ հոգեւոր առաջնորդ: Երբ Քեմալը Թուրքիայում (ավելի ուշ Բուրգիբան Թունիսում) փորձում էր արդիական հասարակություն ստեղծել, նա ուզում էր դրանով նաեւ ընդգծել, որ իշխանությունը շարունակում է տնօրինել կրոնական ոլորտը: Այսպիսով, Թուրքիայում եւ մյուս մահմեդական երկրներում աշխարհիկ հասարակությունները նույնը չեն, ինչ ԱՄՆ-ում կամ Ֆրանսիայում: Իսլամի մեջ հոգեւորականը կարող է լինել լոկ տիրակալի խորհրդականը: Ի դեպ, 1980-ականներին առաջին թուրք իսլամիստները պահանջում էին կրոնը զատել պետությունից:

Ավանդական մահմեդական հասարակության մեջ աներեւակայելի էր սաուդյան տիպի կրոնական ոստիկանության գոյությունը: Մինչեւ 20-րդ դարը իսլամական հասարակությունները աստիճանակարգված էին, սոցիալական խմբերը դասակարգված էին ըստ հարգանքի, հաճախ՝ ըստ «մաքրության» կամ «անմաքրության» աստիճանի: Դա շատ չի տարբերվում Եվրոպայի երբեմնի վիճակից, որտեղ հրեաները համարվում էին «անմաքուր»: Օսմանյան կայսրությունում այլադավանները (հրեաներ, քրիստոնյաներ եւ այլն), ստորադասվում էին մահմեդականներին, բայց հասարակության մեջ ունեին իրենց տեղը: Իսլամական աշխարհում խտրականության որոշ ձեւեր պահպանվել են մինչեւ օրս: Այսպես, արաբական երկրներում մահմեդական կնոջ հետ ամուսնացող այլադավան տղամարդը, որպես կանոն, պարտավոր է իսլամ ընդունել:



*Քեմալ Աթաթուրքը իր որդեգրած դուստրերից Նեբիլեի հետ պարելիս՝ վերջինիս ամուսնության օրը, 1929թ.*

Ի դեպ, Իսրայելում եւս չկա քաղաքացիական ամուսնություն: Ամուսնացողները գործ են ունենում հոգեւորականի հետ: Ամուսնությունը պայմանագիր է եւ եկամուտների շոշափելի աղբյուր ինչպես մահմեդական, այնպես էլ հրեա կրոնավորների համար:

Խառնամուսնությունների դեպքում ի հայտ է գալիս երեխայի դավանանքի հարցը, որը մի իսկական գլուխկոտրուկ է դարձել Եվրոպայում: Լիբանանում նման երեխաները մշտապես դաստիարակվում են հոր կրոնի ոգով, նույնիսկ եթե նա քրիստոնյա է:

1930-ականներից մինչեւ 1970-ականները ընդգրկող արաբական ազգայնականության ժամանակաշրջանի արդիականացման ձգտման պայմաններում իսլամիզմը դարձավ հետադիմական: Օրինակ, նախագահ Նասերը հայտարարեց, որ Ղուրանի մեջ չկան արդի հասարակություններին հարմար դեղատոմսեր: Նա հրապարակավ ծանակեց «Մուսուլման եղբայրների» առաջնորդին, որն ուզում էր գլխաշոր կապել տալ եգիպտուհիներին, մինչդեռ չէր կարողանում նույնն անել տալ իր դուստրերին: Սակայն Նասերը աթեիստ չէր. նա հաճախ մզկիթ էր գնում: Նա պարզապես ուզում էր առավել արդիական տեսք տալ եգիպտական հասարակությանը:

Եգիպտոսի ներկայիս նախագահ, գեներալ Ալ-Սիսին, որն ապարտեզից հեռացրել է նախկին նախագահ, իսլամիստ Մուրսիին եւ «Մուսուլման եղբայրներին», ջանում է հավատացյալի տպավորություն գործել, իր ելույթներում կրոնական բազմաթիվ հղումներ է անում, իսկ նրա կինը գլխաշոր է կրում: (*) Ազգայնականները երբեք հարցականի տակ չեն դնում երկնային կրոնները եւ, անկախ երկրից (Եգիպտոս, Թունիս, Ալժիր...), իսլամը մշտապես ընկած է իշխանության, իրավունքի եւ հասարակության հիմքում, դասավանդվել է հանրակրթական դպրոցներում: Երբ իսլամիզմը զարգացավ, սկսեցին ավելի ուշադիր հետեւել, թե ինչ է դասավանդվում: Պարզվեց, որ դա շատ պահպանողական իսլամ է, եւ դա բացասական հետեւանքներ ունեցավ գյուղական եւ սոցիալապես անապահով միջավայրերում:

Ազգայնական վարչակարգերը պայքարել են անգրագիտության դեմ, բայց այդ պայքարը չի թուլացրել իսլամիզմի դիրքերը, քանի որ մշակույթի պակասի պատճառով տեքստերն ընթերցվել եւ ընկալվել են բառացիորեն: Իսլամիզմին նպաստել են նաեւ երկու այլ գործոններ: Նախ, իսլամիզմը վարչակարգին ընդդիմանալու միջոց է. 2000-ականների սկզբներին բուրժուա կանայք գլխաշոր էին կրում իբրեւ քաղաքական դիմադրության նշան: Ապա, պուրիտանական հասարակություններում, որտեղ ամուսնության տարիքը տնտեսական պատճառներով հեշտիեշտե մեծանում էր, իսլամիզմը եւ դրա խիստ կանոնները դարձան հանրային կարգապահության պարտադրման անհրաժեշտ միջոց:

Մուստաֆա Քեմալի օրոք Թուրքիան հավակնում էր աշխարհիկության, բայց դա «հորինված» աշխարհիկություն էր անատոլիական քրիստոնեության ոչնչացումից հետո: Արդ, այդ «աշխարհիկությունը» նախատեսված էր բացառապես մահմեդական մի երկրի մահմեդականների համար: Բացի դրանից, թեեւ Աթաթուրքը ձգտում էր արդիականացման (նա ներշնչվել էր Շվեյցարիայի Քաղաքացիական օրենսգրքից), այդուհանդերձ նա ինքն էր վերահսկում ու կազմակերպում կրոնական կյանքը: Ըստ էության, քեմալականությունը ավելի շուտ համաձայնեցման վարչակարգ էր, քան աշխարհիկ: Ղուրանը թուրքերեն կարդալը ոչ թե աշխարհիկության, այլ ազգայնականության վկայություն է:

Քեմալականությունը ազդել է թուրքական հասարակության վերին խավերի վրա, բայց չի առնչվել անատոլիական գյուղերին, որտեղ ժողովրդագրական նպաստավոր պայմանների շնորհիվ պահպանվել է ավանդական իսլամը:

Արաբ ազգայնականներ Նասերի, Բուրգիբայի եւ այլոց՝ արդիականացման հետ կապված երազանքները ինչո՞ւ իրողություն չդարձան: Բանն այն է, որ ազգայնականները Եգիպտոսում, Սիրիայում, Իրաքում, Թունիսում հապճեպորեն ստեղծեցին ավտորիտար եւ ոստիկանական պետություններ: Նրանք աստիճանաբար զրկվեցին հանրության աջակցությունից, եւ իսլամիզմը վերածնվեց դասավանդման միջոցով, մասնավորապես՝ գյուղական միջավայրում եւ բնակչության ամենից անապահով խավերի մեջ:

Այն տպավորությունն է ստեղծվում, թե արաբական հեղափոխություններից հետո արդիական պետություն ունենալու երազանքը ի չիք է դարձել սալաֆիստների ջանքերով: «Արաբական գարունները» ոստիկանական բռնապետության հակազդեցությունն էին: Եգիպտոսում Մուբարաքի եւ Թունիսում Բեն Ալիի վարչակարգերը ներկայանում էին որպես ազգայնականների ժառանգորդներ եւ կորցրել էին ժողովրդի վստահությունը: Եթե Եվրոպայում արդյունաբերականացումը եւ գյուղական բնակչության արտահոսքը միջին խավին եւ հասարակ ժողովրդին թույլ տվեցին ձերբազատվել եկեղեցու ուժեղ ազդեցությունից, ապա նույնը չի կարելի ասել արաբական աշխարհի մասին:

Ինչ վերաբերում է ձախամետ, ազգայնական եւ առաջադիմական շարժումներին, դրանք չկարողացան առաջարկել վստահելի այլընտրանք, քանզի երկու-երեք տասնամյակ կենտրոնացել էին հակաիմպերիալիստական պայքարի վրա՝ բացառությամբ Թուրքիայի: Մտավորականների համար ամբիոններն անմատչելի էին, քանի որ պետությունը նախընտրում էր վերահսկել բոլոր ելույթները: Այս ամենի արդյունքում միայն իսլամիստները կարողացան լցնել տվյալ դատարկությունը եւ տարածել իրենց գաղափարները մզկիթների ու կրոնական մյուս հաստատությունների միջոցով:

Աշխարհիկությունը իսլամի մեջ եւ այլուր կապված է մասնավորապես կանանց իրավունքների հետ: Ֆրանսիայում աշխարհիկության հայրերը պայքարել են հանուն կանանց կրթության, եւ այդուհանդերձ միայն 1945 թվականին կանայք ստացան

⇨11

AZG NEW SHABAT.QXD 19/05/2016 21:41 Page 11



# ՆԱՏՕ-ն Եվրոպայում անզոր է ռուսների դեմ



ՆԱՏՕ-ի ղեկավարությունը վախենում է, որ Ռուսաստանի հետ հակամարտության ծագման դեպքում հնարավոր չի լինի Արեւելյան Եվրոպայում ծավալել արագ արձագանքման ուժեր: ՆԱՏՕ-ի բարձրաստիճան որոշ գեներալներ բրիտանական «Ֆայնենշըլ թայմս» թերթին տված հարցազրույցում հայտարարել են, որ դաշինքի արագ ծավալման ուժերը պիտանի չեն Արեւելյան Եվրոպայում տեղաբաշխվելու համար, քանի որ ուժի առումով զիջում են ռուսական բանակին: Հոդվածում ասվում է, որ դաշինքի զորքերը «խոցելի են» ծավալման փուլում:

Խոսքը հինգ հազարի հասնող թվակազմով գերբարձր պատրաստության միացյալ օպերատիվ ուժերի (VJTF) մասին է, որոնց ստեղծման վերաբերյալ որոշում է ընդունվել 2014-ին: «Հենց ՆԱՏՕ-ի գնահատումներով, դաշինքի արագ արձագանքման նոր «առաջավոր» ուժերի տեղաբաշխումը Արեւելյան Եվրոպայում անհնար կլինի Ռուսաստանի հետ պատերազմի դեպքում», հաղորդում է թերթը:

«ՆԱՏՕ-ի երկու բարձրաստիճան գեներալներ» թերթին տված հարցազրույցում ասել են, որ այդ ուժերը «իրենց տեղաբաշխման փուլում չափազանց խոցելի կլինեն Լեհաստանում կամ Բալթյան երկրներում կիրառվելու համար»:

Գեներալներից մեկի խոսքերով, Կալինինգրադի մարզում սեփական ուժերն արմատապես ավելացնելու Ռուսաստանի որոշումը եւ սահմանամերձ տարածքներում առկա էական ռազմական ռեսուրսները նշանակում են, որ «Օդերից արտելք» օպերատիվ ուժերի տեղաբաշխման դեպքում այդ ուժերը կջախջախվեն նախքան մարտավիճակի բերվելը:

ՆԱՏՕ-ի մյուս ներկայացուցիչը հայտարարել է, թե օպերատիվ ուժերը կարող են արագորեն ծավալվել «բոլոր հնարավոր իրավիճակներում», սակայն խոստովանել է, որ ռուսական զորքերի ուժեղացումը բարդացնում է իրադրությունը:

«Արագ արձագանքման ուժերի թույլ տեղերը ՆԱՏՕ-ին դրդեցին իր արեւելյան թեւում մշտապես տեղաբաշխել ընդլայնված զորակազմ», ասվում է հոդվածում:

Առաջիկա հուլիսին ՆԱՏՕ-ի անդամները կհաստատեն տարածքների գործնական պաշտպանությանն ուղղված մի շարք միջոցներ: Ըստ երեւույթին, ամերիկացի զինվորականները դիտավորյալ ուռճացնում են Ռուսաստանից իբր բխող վտանգը, որպեսզի հավելյալ ֆինանսավորում ստանան:

Ամերիկացի զինվորականներն ասել էին, թե ռուսական բանակը արդիական զինատեսակների հնարավորություններով արդեն գերազանցում է ԱՄՆ-ին: Մտավորապես նույն ժամանակ Սենատի ԶՈՒ ենթակոմիտեի նիստում մի խումբ զինվորականներ հայտարարել էին, որ եթե հատկացումները չավելացվեն, ապա ամերիկյան բանակը կարող է «թվակազմով եւ կրակային ուժով» հակառակորդին զիջել հաջորդ պատերազմում, մանավանդ՝ Ռուսաստանի հետ առճակատման դեպքում:

Պ. Ք.

# Լոնդոնի նախկին քաղաքապետը ԵՄ ղեկավարներին համեմատեց Նապոլեոնի եւ Հիտլերի հետ



Լոնդոնի նախկին քաղաքապետ Բորիս Ջոնսոնը Եվրոմիության շրջանակներում եվրոպական երկրների միավորումը համեմատել է Ֆրանսիայի կայսր Նապոլեոն Բոնապարտի եւ նացիստական Գերմանիայի ֆյուրեր Ադոլֆ Հիտլերի կառավարման հետ: Իր կարծիքը նա շարադրել է The Telegraph թերթին տված հարցազրույցում:

Դասական բանասիրության ասպարեզում պրոֆեսիոնալ գիտնական հանդիսացող Ջոնսոնը գտնում է, որ վերջին երկու հազար տարում քանիցս փորձ է արվել Եվրոպան միավորելու մեկ կառավարության ներքո, որպեսզի վերականգնվի Հռոմեական կայսրության ժամանակաշրջանի կորուսյալ «ոսկեդարը»:

«Նապոլեոնը, Հիտլերը, տարբեր մարդիկ փորձել են դա անել, եւ դա ավարտվում է ողբերգականորեն», ասել է նա: Ջոնսոնն ավելացրել է, որ ԵՄ-ն այդ ամենն ուրիշ մեթոդներով իրականացնելու փորձ է:

Բրյուսելում պաշտոնյաները կիրառում են Հիտլերից փոխ առնված «զանազան մեթոդներ», որպեսզի միասնական իշխանության ներքո միավորեն Եվրոպան:

«Սակայն այստեղ սկզբունքային է մի թերություն, մի հավերժական խնդիր, այն է՝ չկա հավատարմություն Եվրոպայի գաղափարին, որն ընկած կլիներ տվյալ գործընթացի հիմքում: Չկա որեւէ տիրական կառույց, որն ամեն ոք կհարգեր կամ կհասկանար: Դա առաջացնում է ժողովրդավարության զանգվածային վակուում», կարծում է Ջոնսոնը:

Լոնդոնի նախկին քաղաքապետը նաեւ գտնում է, որ «ԵՄ «աղետալի» ձախողումները լարվածություն են առաջացրել անդամ պետությունների հարաբերություններում եւ Գերմանիային թույլ են տվել մեծացնելու իր հզորությունը, «կլանելու» Իտալիայի տնտեսությունը եւ «ոչնչացնելու» Հունաստանը: Նրա կարծիքով, եվրոն դարձել է այնպիսի միջոց, որով գերմանացիները բացարձակ առավելություն են ստանում ամբողջ եվրոգոտու նկատմամբ:

Եվրոմիությանն իր անդամակցության հնարավոր դադարեցման հանրաքվեի նախապատրաստման պայմաններում Մեծ Բրիտանիայում սրվում է բանավեճը ԵՄ-ում մնալու նպատակահարմարության թեմայով: Հանրաքվեի անցկացումը նախատեսված է հունիսի 23-ին:

Վարչապետ Դեւիդ Քեմերոնը 2015-ի մայիսին խոստացել էր հանրաքվե անցկացնել ԵՄ-ին իր երկրի անդամության հարցի առնչությամբ: Նա ինքը կողմ է ԵՄ կազմում մնալուն, սակայն՝ Եվրոմիության նշանակալի բարեփոխման պայմանով:

Մայիսի 6-ին Լոնդոնի նոր քաղաքապետ ընտրվեց պակիստանցի ներգաղթյալների զավակ Սադիկ Խանը: Նրան պաշտպանեց ընտրողների 44 տոկոսը, մյուս թեկնածու՝ պահպանողական Զաք Գոլդսմիթը, ստացավ 35 տոկոս: Խանը պատմության մեջ մտավ որպես Լոնդոնի առաջին մահմեդական քաղաքապետ: Բացի դրանից, նա ԵՄ անդամ երկրներում մայրաքաղաքի ղեկավար դարձած առաջին մահմեդականն է:

Պ. Ք.

# Մահմեդական աշխարհը իսլամիստներից առաջ եւ այսօր

⇨10 ընտրություններին մասնակցելու իրավունք: Հասարակության վերաիսլամացման բոլոր փորձերը սկսվում են կանանցից: Թուրքիայում երկար ժամանակ պայքարել են հասարակական վայրերում գլխաշոր կրելու դեմ, սակայն Եվրոդատարանն այդ հարցը թողնում է պետության հայեցողությանը. եթե նա իսլամիստական է, ուրեմն գլխաշորը պարտադիր է:

Իսլամիստներն արդյունավետորեն հարմարվում են նոր պայմաններին: Օրինակ, Պարսից ծոցի երկրներում ներկայումս գոյություն ունեն ամուսնության մեկօրյա, երկշաբաթյա, վեցամսյա եւ այլ պայմանագրեր: Դրանք փաստորեն մերձենում են ազատ կենակցության պայմանագրային ձեւերին: Խնդիրը տվյալ դեպքում ոչ թե իսլամական օրենքն է, այլ հայրիշխանության որոշակի դրսեւորումը: Չնայած այս ամենին, մահմեդական երկրներում եւս կանայք աստիճանաբար ձեռք են բերում նոր իրավունքներ: Օրինակ, Իրանում կանայք ներկայումս ամուսնալուծվում են, ինչը չէին կարողանում անել շահի օրոք: Եգիպտոսում կանայք պահպանում են իրենց օրիորդական ազգանունը:

Առանց կրոնական հանդուրժողականության հնարավո՞ր է արդյոք իսկական ժողովրդավարություն: Այս հարցի առնչությամբ Անրի Լորանը նշում, է որ մահմեդական երկրներում առաջին պահանջը իրավական պետության գոյությունն է: Իսլամիստների համար գլխավոր հարցն այն է, թե ժողովրդավարական կառույցներն արդյոք պե՞տք է իսլամիստական բնույթ ունենան: Այս առումով «Մուսուլման եղբայրները» մշտապես պտտվել են նույն տեղում: Նրանք կարծում էին, թե կառավարող մեծամասնության մեջ լինելով՝ իրենք կարող են սեփական ընկալումը պարտադրել ամենքին, բայց հաջողության չհասան: Նույն բանն ուզում է անել Էրդողանը Թուրքիայում: Իրականում հարկավոր է պարզել, թե ժողովրդավարության գոյությունը պահանջո՞ւմ է արդյոք, որ բոլորն անկեղծորեն լինեն մահմեդական: Ժան-Ժակ Ռուսոն ասում էր, որ ճշմարիտ քրիստոնյաների բազմությունը կկարողանար կազմել հնարավոր ամենակատարյալ հասարակությունը, բայց դա չէր լինի մարդկանց հասարակություն: Մնում է կիրառել ֆրանսիացի սոցիալիստների 1946 թ. կառավարության ղեկավար, գրող Լեոն Բլյումի հետեւյալ ասույթը. «Հնարավոր է որեւէ կոալիցիայի շրջանակում պարտադրել բարեփոխումներ, բայց հասարակությունը կարելի է վերափոխել միայն իշխանությանը տիրելու դեպքում»:



*1965թ., Բեյրութի ծովահայաց մասում. աղջիկը ծածկել է դեմքը*

Միջին Արեւելքում Radio France-ի թղթակից Կլոդ Գիբալը Եգիպտոսում իսլամիստների մեծ ազդեցության պատճառներից մեկը համարում է 1990-ականներին Սաուդյան Արաբիայում հարստացած եւ արմատական իսլամի գաղափարներով տոգորված եգիպտացիների զանգվածային հայրենադարձությունը: Նա ընդգծում է «Մուսուլման եղբայրների» եւ սալաֆիստների էական տարբերությունը: Սալաֆիստները միշտ արհամարհել են «Մուսուլման եղբայրներին», քանզի վերջիններս զբաղվում են քաղաքականությամբ, որը «կոռուպցիայի, գործարքների, ստի» ոլորտ է: Սալաֆիստները Աստծո իշխանությունը համարում են գերագույն օրենք, «շարիաթը»՝ իրավունքի միակ աղբյուր: Եգիպտոսի նախագահ Անուար Սադաթը «Մուսուլման եղբայրներին» օգտագործում էր ձախ ընդդիմությանը թուլացնելու նպատակով: Նա փոփոխեց սահմանադրությունը՝ ամրագրելով, որ «շարիաթը» իրավունքի գլխավոր աղբյուրներից մեկն է:

Ընդհանուր առմամբ այն տպավորությունն է ստեղծվում, թե «Արաբական գարնան» հեղափոխություններից շահել են հիմնականում իսլամիստները: Ի վերջո, սալաֆիստները եւս մուտք գործեցին քաղաքական ասպարեզ: Դա մեծ անակնկալ էր: «Արաբական գարնան» հեղափոխությունները նրանց դարձրին քաղաքական շարժում: Եգիպտոսում ընտրությունների ժամանակ նրանք նույնիսկ առաջադրեցին կին թեկնածուների, որոնց դեմքերը փակ էին, իսկ ընտրաշավով զբաղվում էին ամուսինները: Իսլամիստ նախագահ Մուրսիի տապալման պահին սալաֆիստներն Ալ-Սիսիին ընտրեցին ընդդեմ «Մուսուլման եղբայրների»: Վերջիններիս ամեն կերպ օգնում է Քաթարը, մինչդեռ Ալ-Սիսիի աջակից Սաուդյան Արաբիան օգնում է սալաֆիստական կուսակցություններին:

**Պատրաստեց Պ. ՔԵՇԻՇՅԱՆԸ**

**) Անհրաժեշտ է նշել, որ կրոնական հանդուրժողականությունը Եգիպտոսում բավական արմատավորված է, հատկապես քաղաքներում, որտեղ ապրում են միլիոնավոր քրիստոնյաներ նաեւ (մեծ մասը՝ ղպտիներ): Հատկանշական է օրինակ, որ պետականորեն նշվում է ղպտի եկեղեցու Սբ. Ծննդի եւ Սբ. Հարության տոները: Այդ օրերին Եգիպտոսում փակ են լինում պետական բոլոր հիմնարկները: Խմբ.:*

AZG NEW SHABAT.QXD 19/05/2016 21:41 Page 12



ՆԱԻՐ ՅԱՆ

# Համեցե՛ք թանգարաններ

Թանգարանները հասարակության շրջանում հետաքրքրական ու գրավիչ դարձնելը մեզ համար միշտ էլ խնդիր է եղել: Ում կենսագրությունը սովետական մասնաբաժին ունի, լավ կհիշի, թե ինչպես էին աշակերտներին պարտադրաբար տանում թանգարաններ ու սիմֆոնիկ համերգների: Իհարկե, յուրաքանչյուր պարտադրանք տհաճ է ու քննադատության ենթակա, բայց որ մշակույթի հետ թեկուզ պարտադրանքով հաղորդակցվելը դրական արդյունք էր տալիս, անհերքելի է: Այդպես է. մեկ- երկու անգամ՝ պարտադրաբար, հետո սկսում է դուր գալ, շատ չանցած՝ անգամ անհարժեշտություն ու պահանջ դառնալ: Այդպես սովետական հասարակությունը յոթանասուն տարիների ընթացքում սովորեց, որ դասական համերգներին դադարների ժամանակ չի կարելի ծափ տալ, դա ամոթ է ու անքողարկելի անգրագիտություն: Աբոնեմենտային ծրագրով աշակերտներին դպրոցից ուղիղ ավտոբուս էին նստեցնում, որ նրանք հանկարծ ճանապարհին չփախչեն: Կինո, թատրոն, թանգարան, համերգ էին տանում: Մարդ արարածին դեռ փոքր տարիքում կրթելու, դաստիարակելու, մշակութային արժեքներ սերմանելու արդյունք էր «Դպրոցականի ֆիլհարմոնիա» ծրագիրը: Այդպես բռնի ուժով ձեւավորվեց հասարակության միջին խավ՝ միջինացված գիտելիքներով, գիտակցական մակարդակով ու արժեհամակարգով:

Անկախության շրջանում երեխաներին թանգարան ու համերգներ տանելու պարտադրանքը բացառվեց: Կոմիտասը փողոց է, Մոցարտը՝ շոկոլադ, Թումանյանը՝ 5000 դրամանոց կամ շաուրմայանոց: Ժամանակի ընթացքում, սակայն, մեր երկիրը եւս ներգրավվեց միջազգային որոշ նախագծերում, հետեւեց Եվրոպայում մեծ հնչեղություն ստացած ծրագրերին ու մշակեց դրանց ինտեգրվելու մեթոդներ ու մոտեցումներ:

2005 թվականից Հայաստանում անց է կացվում «Թանգարանների գիշեր» ակցիան, որի նախապատրաստական աշխատանքներն սկսվում են մայիսի 18-ին՝ թանգարանների միջազգային օրը: Առաջին տարիներին մեր հասարակությունը մի փոքր տարակուսած ընդունեց ուշ երեկոյան թանգարաններ այցելելու այն էլ անվճար առաջարկը: Բայց տարեցտարի վարժվեց, սովորեց ու անգամ սկսեց սիրել «Թանգարանների գիշերն» ու ամեն տարի սպասել մայիսի 18-ին հաջորդող առաջին շաբաթ օրվան: Թանգարաններն էլ սկսեցին ավելի լրջորեն պատրաստվել ակցիային՝ հատուկ ցուցադրություններ, գրական-երաժշտական երեկոներ, հյուրասիրություն, թատերական ներկայացումներ, ինտերակտիվ խաղեր եւ այլն: Այսկերպ թանգարաններն սկսեցին կամաց-կամաց մոտենալ հասարակությանը՝ խոստանալով հետաքրքրական ու տպավորիչ ժամանց:




Մշակույթի նախարարությունը վիճակագրական տվյալներ է ներկայացնում. 2010 թվականին «Թանգարանների գիշերվա» շրջանակում թանգարաններն ունեցել են 20 հազար այցելու, իսկ 2015 թվականին՝ 212 հազար:

Մայիսի 21-ին կանցկացվի «Թանգարանների գիշեր» ակցիան, որին մասնակցելու է Հայաստանի եւ Արցախի 112 թանգարան: Նախաձեռնությունը նաեւ մրցակցություն է առաջացրել հենց թանգարանների միջեւ. ո՞ր հաստատությունն ավելի յուրօրինակ կերպով կներկայանա այցելուներին: Նկատելի առաջընթաց կա. երեկոյի ընթացքում թանգարաններ են այցելում ընտանիքներով: Սա արդեն բոլորովին այլ մշակույթ է, որը սոցիալական, հոգեբանական ուսումնասիրության նոր տիրույթներ է բաց անում: Արվեստի օջախ այցելելը, հետո տպավորությունները տանը քննարկելը, ի մի բերելը ընտանեկան համախմբվածության ու մշակութային դրսեւորման անսովոր երեւույթ է: Ի վերջո, թանգարանային նույն նմուշը «հայր, մայր, զավակներ- ընտանիք» ձեւաչափով դիտելն ու ընկալելը փոխհարաբերությունների նոր եզրեր է ստեղծում: Այս ամենին ավելացնենք այցելությունները դասարաններով ու այլ կոլեկտիվներով, բայց ամենակարեւորն, այնուամենայնիվ, ընտանեկան ձեւաչափն է:

«Թանգարանային գիշերվան» մասնակցելու մյուս սկզբունքը հնարավորինս շատ թվով թանգարաններ այցելելն ու ամենահետաքրքրական նախագծերը բաց չթողնելն է: Այն աշխուժությունն ու երթեւեկը, որ տիրում է թանգարաններում ու դրանց շրջակայքում, ուղղակի մարդու նախանձ է շարժում: Բոլորը շտապում են, ուզում են արդյունավետ օգտագործել ժամանակը. նախապես ձեռք բերած տեղեկատվական գրքույկների օգնությամբ մի թանգարանից մյուսն են շտապում: Հասարակության ակտիվության մյուս պատճառն այն է, որ թանգարանների մուտքն անվճար է: Բազմաթիվ հանգամանքներով պայմանավորված՝ մեզանում դեռ չի ձեւավորվել հոգեւոր սննդին գումար հատկացնելու հոգեբանությունն ու պատրաստակամությունը: 800-1000 դրամ տալ եւ թանգարանի տոմս առնել քչերն են պատրաստ: Հաստատ սովորական սրճարանում դրա տասնապատիկն են ծախսում, սակայն շատերի համար էլ այդ 800-1000-ը լուրջ գումար է: Ընտանիքով թանգարան այցելելու դեպքում այն ավելի լուրջ է դառնում: Հետեւաբար, «Թանգարանների գիշերվան» ակտիվ արձագանքելու պատճառներից մեկն էլ սոցիալականն է:

Այս տարի ակցիան կրում է «Թանգարանները եւ մշակութային լանդշաֆտները» խորագիրը: Մայիսի 21-ին Հայաստանի եւ Արցախի թանգարանները ժամը 18-ից մինչեւ կեսգիշեր սպասում են մեծաթիվ այցելուների: Համեցե՛ք:

# Վիեննան ապացուցեց բանակցությունների «կոման»

⇨2

**Ով եւ ինչու է բավարարված հայտարարում Վիեննայում մայիսի 16-ին «զոռով-շառով» կազմակերպված հանդիպումից, միայն ենթադրել կարելի է, սակայն հստակ է, որ հանդիպման գնալ ուղղակի ճշտելու, թե արդյոք կա հանդիպում, հավատացնում եմ, քիչ տարօրինակ է: Ավելին, եթե այդ իսկ նպատակով հանդիպման գնալուց հետո դեռ հայտարարվում է բավարարված լինելու մասին, ուրեմն տարօրինակությունները դեռ նոր են սկսվում:**

**Այս իրավիճակում, երբ շփման գիծը դեպի Արցախյան կողմ «տեղաշարժվել» է, կան բազմաթիվ զոհեր, որ իրավամբ ոչ մի հարյուրավոր հեկտար չի կարող արդարացնել, էականն է ու առաջնային, որ ամեն ինչ արվի շփման գծի երկայնքով ոչ մեկ ավել զոհ չտալու համար: Իսկ դրան ոչ մի կերպ չեն նպաստում ինչպես վիեննական հանդիպումները, որոնցից վերջինի ժամանակ անգամ ինչպես հայկական, այնպես էլ ադրբեջանական կողմերը հայտարարեցին մեկական զոհի մասին, այնպես էլ ուռա-հայրենասիրական ցնցումները, որոնք ալիքվում ու ալիքվում են տեղեկատվական փշրանքներով բավարարվող հանրույթում:**

**Այն, որ բանակցային գործընթացն ու ԵԱՀԿ Մինսկի խումբը նախորդիվ արդարացվում էին հարաբերական խաղաղության պահպանման հանգամանքով, այժմ այլեւս չաշխատող փաստարկ է, ասել է, թե ԵԱՀԿ Մինսկի խումբն ու բանակցային սեղանի շուրջ չբանակցելու նպատակով հայտնվածները հետագա քայլերի համար այլ տրամաբանություն, մոտեցում ու փաստարկ պետք է մտածեն, թե չէ մնում է միայն պատրաստվել առավել մեծ մասշտաբների, ցավալի, ահավոր, բայց պատերազմի՛: Դիտարկումը, թե Վիեննայի հանդիպումը բանակցային գործընթացը վերակենդանացնելու փորձ էր, իսկապես տեղին է, բայց ակնհայտորեն գործընթացը շարունակում է մնալ «կոմայի» մեջ, ընդ որում, կոմայում գտնվողին վերակենդանացնել հնարավոր չէ, այլ միայն պետք է դուրս բերել այդ վիճակից կամ սպասել... Դա հաստատ այս դեպքում անել չի կարելի:**

## ՀՈՍՈՒՆ ԼՐԱՀՈՍ

### Վիսկին չի օգնում, կօգնի «թոթի» արաղը

**Նախքան Վիեննայում Սարգսյան-Ալիեւ ոչ տետ-ա-տետ հանդիպման մեկնարկը, Ավստրիայի մայրաքաղաքում ամերիկյան Պետքարտուղարության ներկայացուցիչները, որոնք ներկայացվում են որպես Պետքարտուղարության ավագ պաշտոնյա-1 եւ Պետքարտուղարության ավագ պաշտոնյա-2 (ենթադրվում է, որ այդ փակ հանդիպմանը եղել են պետքարտուղարի՝ Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով օգնական Վիկտորիա Նյուլանդն ու Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջեյմս Ուորլիքը) խոսել են հակամարտության մասին եւ մի շարք կարեւոր եւ անչափ հետաքրքրական տեղեկություններ հաղորդել: Օրինակ՝ այս մեկը. խոսելով նախկինում տեղի ունեցած Սարգսյան-Ալիեւ հանդիպումներից, ամերիկացի դիվանագետները ասել են. «Կարեւոր է այն, որ նրանք ունակ են խոսել միմյանց հետ: Այսօր հանդիպման այլ ձեւաչափ ունենք, բայց անցյալում մենք նրանց հնարավորություն ենք տվել երկար ժամանակ խոսել դեմ առ դեմ: Սեղանին մի շիշ սկոչ ենք դնում եւ նրանց հնարավորություն տալիս քննարկելու բոլոր հարցերը»:**

**Թե որքանով է օգնում բանակցություններին վիսկին, պարզ չէ, բայց, որ բանակցություններին կօգնի ոչ թե վիսկիի, այլ Ղարաբաղի «թոթի» արաղը, պարզ է:**

### Սերժ Սարգսյանը չեմպիոն է

**ՖԻԴԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովը, որը պաշտոնի բերումով նաեւ ՌԴ շախմատի ֆեդերացիայի նախագահի նախագահն է, առաջարկել է Հայաստանին եւ Ադրբեջանին շախմատ խաղալ պատերազմելու փոխարեն, քանի որ շախմատը օգնում է փոխըմբռնման հասնել: Ընդ որում, ՖԻԴԵ-ի նախագահը նշել է, որ երբ ինքն իր այս առաջարկությունն արել է Սերժ Սարգսյանին, վերջինս հաճույքով ընդունել է:**

**Միեւնույն ժամանակ Իլյումժինովը նշել է, որ Սերժ Ազատիչը ուժեղ խաղացող է, հրաշալի գիտի տեսությունը եւ ՖԻԴԵ-ի անդամ երկրների նախագահների թվում չեմպիոն է, իսկ ՖԻԴԵ-ի անդամ երկրները 187-ն են:**

**Եւ քանի դեռ դուք չեք ուրախացել, որ փաստորեն ՖԻԴԵ-ն Ադրբեջանին տանում է դեպի պարտություն, ասենք, որ շախմատի համաշխարհային այս տարվա օլիմպիադան տեղի կունենա սեպտեմբերի 1-14-ը՝ Բաքվում:**

### ՀԱՊԿ-ը Հայաստանում է

**Մայիսի 24-26-ը Հայաստանում կանցկացվեն համատեղ հատուկ մարտավարական զորավարժություններ՝ «Կոբալտ-2016»-ը, որին կմասնակցնեն ՀԱՊԿ անդամ երկրների ներքին զորքերի (ոստիկանության) ստորաբաժանումները, որոնք ընդգրկված են ՀԱՊԿ արագ արձագանքման հավաքական ուժերի կազմում. տեղեկանում ենք ՀԱՊԿ պաշտոնական կայքից:**

**Զորավարժությունները կանցկացվեն ՀՀ ՊՆ «Բաղրամյան» ուսումնական կենտրոնում: Դրանց կհետեւի ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան:**

**Զորավարժությունների ընթացքում կմշակվեն ահաբեկչական խմբավորումների դեմ պայքարի համատեղ միջոցառումներ, զենքի, թմրանյութերի, պայթուցիկ նյութերի ապօրինի շրջանառության ուղիների արգելափակման հնարավորությունները եւ այլն: Կկիրառվեն մարտական եւ ռազմա-տրանսպորտային ուղղաթիռներ:**

**Թե որքանով այս զորավարժությունները կանհանգստացնեն ադրբեջանցիներին, դժվար է ասել, բայց որ մեզ ուղղաթիռների ձայները կանհանգստացնեն, հստակ է:**

**Պատրաստեց՝ ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆԸ**

VIVACELL MTS

ՎիվաՍել-ՄՏՍ-ը հիշեցնում է, որ կանխավճարային հեռախոսահամարների հաշվեկշռի՝ «Լիցք» ծառայության միջոցով վերալիցքավորման դեպքում միջնորդավճար չի գանձվում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջերս գրանցվել են առանց ընկերության իմացության միջնորդի կողմից միջնորդավճարի գանձման դեպքեր՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ը կոչ է անում իր բաժանորդներին հետեւել եւ պահանջել, որ լիցքավորման գումարը հաշվեկշռին փոխանցվի ամբողջությամբ:

**«Կ-Տելեկոմ» ՓԲ ընկերություն**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 19.5.2016, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: